

**Էներգիայով աշխատող արտադրանքի էկոնախագծման պահանջները սահմանող
շրջանակն ստեղծող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի
հոկտեմբերի 21-ի 2009/125/ԵՀ հրահանգ**

Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ

Պաշտոնական տեղեկագիր L 285, 31/10/2009թ., էջ 0010 - 0035

(վերամշակված) (Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և,
մասնավորապես, դրա 95-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի
եզրակացությունը [1],

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին
համապատասխան [2],

Քանի որ

1) Էներգիայով աշխատող արտադրանքի էկոնախագծման պահանջները սահմանող
շրջանակն ստեղծող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2005 թվականի հուլիսի 6-ի
2005/32/ԵՀ հրահանգը [3] էապես փոփոխվել է: Քանի որ հետագա փոփոխություններ են
սպասվում՝ կապված այն հանգամանքի հետ, որ այդ հրահանգի գործողության շրջանակի
ընդլայնումը խստորեն սահմանափակ է Էներգիայով աշխատող բոլոր արտադրանքների
մասով, այդ հրահանգը վերամշակվում է՝ ելնելով հստակության նկատառումներից,

2) Էներգիայով աշխատող բոլոր արտադրանքների էկոնախագծման համար անդամ
պետությունների կողմից ընդունված օրենքների ու վարչական միջոցների միջև եղած
անհամապատասխանությունները կարող են Համայնքում խոչընդոտներ ստեղծել առևտրի և
մրցակցության համար և այդպիսով կարող են ուղղակի ազդեցություն ունենալ ներքին
շուկայի ստեղծման և գործունեության վրա: Ներպետական իրավունքների

ներդաշնակեցումը առևտրի և անարդար մրցակցության ոլորտում ծառացած խոչընդոտները կանխելու միակ միջոցն է: Էներգիայով աշխատող բոլոր արտադրանքների գործողության ոլորտի ընդլայնումն ապահովում է, որ Էներգիայով աշխատող համապատասխան բոլոր արտադրանքների էկոնախագծման պահանջները կարող են ներդաշնակեցվել Համայնքի մակարդակով,

3) Էներգիայով աշխատող արտադրանքները Համայնքում Էներգիայի և բնական ռեսուրսների սպառման մեծ մասնաբաժին են կազմում: Դրանք ունեն նաև մի շարք այլ կարևոր ազդեցություններ շրջակա միջավայրի վրա: Համայնքի շուկայում հասանելի արտադրանքների կատեգորիաների մեծ մասի համար կարող են նշվել շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության շատ տարբեր աստիճաններ՝ չնայած այն հանգամանքին, որ դրանք ունեն գործառնության նմանատիպ կատարումներ: Այդ արտադրանքների կողմից շրջակա միջավայրի վրա ունեցած ընդհանուր ազդեցության նպատակով անհրաժեշտ է խրախուսել կայուն զարգացումը, շարունակական բարելավումը՝ հատկապես հայտնաբերելով շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության հիմնական աղբյուրներն ու խուսափելով աղտոտման տարածումից, երբ այս բարելավումը լրացուցիչ ծախսեր չի պահանջում,

4) Էներգիայով աշխատող շատ արտադրանքներ բարելավվելու բավականին մեծ պոտենցիալ ունեն, որպեսզի նվազեցվեն շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ավելի լավ նախագծման շնորհիվ հնարավոր լինի հասնել էներգախնայողության, որը ձեռնարկությունների և վերջնական սպառողների համար կհանգեցնի նաև տնտեսական խնայողության: Բացի էներգիա օգտագործող, անջատող, փոխանցող կամ չափող արտադրանքներից, էներգիայով աշխատող որոշ արտադրանքներ՝ ներառյալ այն արտադրանքները, որոնք օգտագործվում են շինարարության մեջ, ինչպես օրինակ՝ պատուհանները, մեկուսիչ նյութերը կամ որոշ ջրօգտագործող արտադրանքներ, ինչպես օրինակ՝ ցնցուղների գլխիկները և ծորակները, նույնպես կարող են նպաստել դրանց օգտագործման ընթացքում զգալի էներգախնայողությանը,

5) արտադրանքների էկոնախագծումը արտադրանքների մասնական քաղաքականության վերաբերյալ Համայնքի ռազմավարության մեջ կարևոր գործոն է: Որպես կանխարգելիչ մոտեցում, որը նախատեսված է արտադրանքների բնապահպանական առանձնահատկություններն օպտիմալացնելու համար՝ պահպանելով իրենց ֆունկցիոնալ հատկությունները, այն իրական նոր հնարավորություններ է ընձեռում արտադրողներին, սպառողներին և, ընդհանուր առմամբ, հանրությանը,

6) Էներգետիկ արդյունավետության բարելավումը — էլեկտրաէներգիայի վերջնական սպառման համար ընձեռվող առավել արդյունավետ տարբերակներից մեկով — համարվում է Համայնքում ջերմոցային գազերի արտանետումների թիրախին հասնելու գործում զգալի խթանիչ ուժ: Էլեկտրականության պահանջը էներգիայի վերջնական սպառման ամենաարագ աճող կատեգորիան է, և նախատեսվում է, որ այն դեռ կաճի հաջորդ 20-ից 30 տարիների ընթացքում՝ այս միտմանը հակազդող քաղաքականությամբ սահմանված որևէ գործողության բացակայության դեպքում: Էներգիայի սպառման զգալի կրճատումը, ինչպես առաջարկում է Հանձնաժողովն իր «Կլիմայի փոփոխության եվրոպական ծրագրում» (ԿՓԵԾ), հնարավոր է: Կլիմայի փոփոխությունը Եվրոպական պառլամենտի և խորհրդի թիվ 1600/2002/ԵՀ որոշմամբ [4] ընդունված Համայնքի շրջակա միջավայրի գործողությունների վեցերորդ ծրագրի առաջնահերթություններից մեկն է: Էներգախնայողությունը մատակարարման անվտանգությունը մեծացնելու և ներմուծումից կախվածությունը նվազեցնելու ամենածախսարդյունավետ միջոցն է: Այսպիսով, անհրաժեշտ է ընդունել սպառողական էական միջոցներ և թիրախներ,

7) Էներգիայով աշխատող արտադրանքները նախագծելիս անհրաժեշտ է գործողություն ձեռնարկել, քանի որ պարզվում է, որ արտադրանքի կյանքի պարբերաշրջանի ընթացքում առաջացած աղտոտվածությունն ակնհայտ է դառնում այդ փուլում, և դրա հետ կապված ծախսերն իրականացվում են հենց այդ ժամանակ,

8) Էներգիայով աշխատող արտադրանքների էկոնախագծման համար Համայնքի մասշտաբով ընդունված պահանջների կիրառության համար սահմանվում է համապատասխան շրջանակ՝ նպատակ ունենալով ապահովելու այդ արտադրանքների ազատ տեղաշարժը, որոնք համապատասխանում են այդ պահանջներին, և նպատակ ունենալով բարելավելու շրջակա միջավայրի վրա դրանց ունեցած ընդհանուր ազդեցությունը: Համայնքի մասշտաբով ընդունված այդ պահանջները պահպանում են արդար մրցակցության և միջազգային առևտրի սկզբունքները,

9) Էկոնախագծման պահանջները սահմանվում են՝ հաշվի առնելով Համայնքի շրջակա միջավայրի գործողությունների վեցերորդ ծրագրի նպատակներն ու առաջնահերթությունները՝ ներառյալ, անհրաժեշտության դեպքում, այդ ծրագրի համապատասխան թեմատիկ ռազմավարությունների կիրառվող նպատակները,

10) սույն Հրահանգի նպատակն է հասնել շրջակա միջավայրի պաշտպանության բարձր մակարդակի՝ նվազեցնելով էներգիայով աշխատող արտադրանքների պոտենցիալ

ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ինչը, վերջին հաշվով, շահավետ է սպառողների և այլ վերջնական օգտագործողների համար: Կայուն զարգացման համար անհրաժեշտ է նաև պատշաճ ձևով հաշվի առնել նախատեսված միջոցների առողջության, սոցիալական և տնտեսական ազդեցությունները: Արտադրանքների էներգաարդյունավետության ու ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարելավումը նպաստում է էներգիայի մատակարարման անվտանգությանն ու բնական ռեսուրսների պահանջարկի նվազեցմանը, որոնք տնտեսական գործունեության և, հետևաբար, կայուն զարգացման նախադրյալներն են,

11) որևէ անդամ պետություն, որն անհրաժեշտ է համարում շրջակա միջավայրի պաշտպանության հետ կապված գերակա կարիքների հիմունքով ազգային դրույթները պահպանելը կամ կիրարկումն ապահովող համապատասխան միջոցառումների ընդունումից հետո տվյալ անդամ պետությունում ծագած կոնկրետ հիմնախնդիրների հիմունքով շրջակա միջավայրի պաշտպանության վերաբերյալ նոր գիտական փաստերի վրա հիմնված նոր դրույթների ներմուծումը, կարող է այդպես էլ անել՝ համաձայն Պայմանագրի 95(4), (5) և (6) հոդվածով սահմանված պայմանների, որոնք ապահովում են Հանձնաժողովին տրամադրվող նախնական տեղեկատվությունն ու Հանձնաժողովից ստացված հավանությունը,

12) բարելավված նախագծի արդյունքում շրջակա միջավայրին սպասվող օգուտներն առավելագույնին հասցնելու համար կարող է անհրաժեշտություն լինել սպառողներին տեղեկացնելու էներգիայով աշխատող արտադրանքների բնապահպանական առանձնահատկությունների և աշխատանքի մասին, ինչպես նաև խորհուրդ տալու նրանց, թե ինչպես այդ արտադրանքներն օգտագործել այնպես, որ դրանց գործածությունն առավել նպաստավոր լինի շրջակա միջավայրի համար,

13) Հանձնաժողովի՝ «Արտադրանքի միասնական քաղաքականություն – Հիմնված շրջակա միջավայրի կյանքի պարբերաշրջանի վերաբերյալ ունեցած պատկերացման վրա» 2003 թվականի հունիսի 18-ի հաղորդագրության մեջ նշված մոտեցումը, որը Համայնքի շրջակա միջավայրի գործողությունների վեցերորդ ծրագրի կարևորագույն նորարարական տարրն է, նպատակ ունի նվազեցնելու արտադրանքների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա դրանց կյանքի պարբերաշրջանի ողջ ընթացքում՝ ներառյալ հումքի ընտրության և օգտագործման, արտադրության, փաթեթավորման, փոխադրման և բաշխման ընթացքում, տեղադրման և պահպանման, օգտագործման և շահագործումից դուրս գալու ընթացքում: Հաշվի առնելով նախագծման փուլը՝ արտադրանքի կյանքի պարբերաշրջանի ընթացքում

շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցությունը մեծ հնարավորություն է բնապահպանական առանձնահատկությունները ծախսարդյունավետ ձևով բարելավելու համար՝ ներառյալ ռեսուրսների և նյութերի արդյունավետությունը, դրանով իսկ նպաստելով Բնական ռեսուրսների կայուն օգտագործման վերաբերյալ թեմատիկ ռազմավարության նպատակների իրականացմանը: Արտադրանքի նախագծում այս գործոնը միասնական դարձնելու համար հարկավոր է բավարար ճկունություն ցուցաբերել՝ ուշադրություն դարձնելով տեխնիկական, ֆունկցիոնալ և տնտեսական նկատառումներին,

14) թեև բնապահպանական առանձնահատկությունների նկատմամբ համընդգրկուն մոտեցումը ցանկալի է, էներգիայի օգտագործման բարձր արդյունավետության միջոցով ջերմոցային գազերի չափավորումը պետք է համարվի բնապահպանական առաջնային նպատակ՝ նախքան աշխատանքային պլանի ընդունումը,

15) հնարավոր է, որ որոշ արտադրանքների և դրանց բնապահպանական ասպեկտների համար էկոնախագծման կոնկրետ քանակական պահանջներ սահմանելն անհրաժեշտ և արդարացված լինի՝ ապահովելու համար, որ շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցությունը հասցված է նվազագույնի: Հաշվի առնելով Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի վերաբերյալ Կիոտոյի արձանագրության շրջանակում պարտավորությունների կատարմանը նպաստելու հրատապ անհրաժեշտությունը և չհակասելով սույն Հրահանգում նշված միասնական մոտեցումը՝ առավելությունը պետք է տրվի այն միջոցներին, որոնք ջերմոցային գազերի արտանետումները քիչ ծախսերով նվազեցնելու մեծ պոտենցիալ ունեն: Այս միջոցները կարող են նաև նպաստել ռեսուրսների կայուն օգտագործմանն ու մեծ ներդրում ունենալ 2002 թվականի օգոստոսի 26-ից սեպտեմբերի 4-ն ընկած ժամանակահատվածում Յոհաննեսբուրգում կայացած Կայուն զարգացմանը նվիրված համաշխարհային գագաթաժողովում կայուն արտադրության և սպառման վերաբերյալ ծրագրերի տասնամյա շրջանակում,

16) որպես ընդհանուր սկզբունք, ինչպես նաև հարկ եղած դեպքում էներգիայով աշխատող արտադրանքի՝ միացված կամ անջատված վիճակներում էներգիայի սպառումը պետք է հասցվի դրանց պատշաճ աշխատանքի համար անհրաժեշտ նվազագույն քանակի,

17) մինչ շուկայում՝ ներառյալ միջազգային շուկաներում հասանելի լավագույն կատարողականությամբ արտադրանքներն ու տեխնոլոգիաներն ընկալվում են որպես էտալոն, էկոնախագծման պահանջների մակարդակը պետք է հաստատվի տեխնիկական, տնտեսական և բնապահպանական վերլուծության հիման վրա: Պահանջների մակարդակը

սահմանելու մեթոդի ճկունությունը կարող է ավելի հեշտ և արագ ձևով բարելավել բնապահպանական առանձնահատկությունները: Շահագրգիռ կողմերը պետք է ակտիվ կերպով խորհրդակցեն և համագործակցեն այս վերլուծության շուրջ: Պարտադիր միջոցների սահմանումը շահագրգիռ կողմերի պատշաճ խորհրդակցություն է պահանջում: Այդ խորհրդակցությունը կարող է ընդգծել փուլային եղանակով ներմուծման կամ անցումային միջոցների կարիքը: Միջանկյալ թիրախների ներմուծումը բարձրացնում է քաղաքականության կանխատեսելիությունը, տարածվում է համապատասխան արտադրանքի մշակման փուլերի վրա և նպաստում է շահագրգիռ կողմերի երկարաժամկետ պլանավորմանը,

18) առավելությունը պետք է տալ գործողության այլընտրանքային տարբերակներին, ինչպես օրինակ արդյունաբերության կողմից ինքնակարգավորումը, երբ նման գործողությունն ավելի արագ կամ ավելի քիչ ծախսերով է տրամադրում քաղաքականության նպատակները, քան պարտադիր պահանջները: Եթե շուկայական ուժերը ձախողում են ճիշտ ուղղությամբ կամ անհրաժեշտ արագությամբ զարգացումը, ապա կարող է օրենսդրական միջոցների անհրաժեշտություն զգացվել,

19) ինքնակարգավորումը՝ ներառյալ կամավոր համաձայնությունները, որոնք արդյունաբերության կողմից առաջարկվել են որպես միակողմանի պարտավորություններ, կարող են արագ և ծախսարդյունավետ իրականացման շնորհիվ առաջընթաց արձանագրել և տարածվել տեխնոլոգիական տարբերակների և շուկայի զգայունության ճկուն և համապատասխան փոփոխությունների վրա,

20) որպես կիրարկումն ապահովող միջոցների այլընտրանքային տարբերակ ներկայացված կամավոր համաձայնագրերի կամ ինքնակարգավորման այլ միջոցների գնահատման համար պետք է հասանելի լինեն տեղեկություններն առնվազն հետևյալ խնդիրների վերաբերյալ՝ ինքնակարգավորման նախաձեռնության և կայունության իրականացման բաց մասնակցություն, ավելացված արժեք, ներկայացուցչականություն, համարակալված և աստիճանական նպատակներ, քաղաքացիական հասարակության ընդգրկում, դիտանցում և զեկուցում, ծախսարդյունավետություն,

21) Հանձնաժողովի 2002 թվականի փետրվարի 17-ի «Կարգավորվող դաշտի պարզեցման և բարելավման վերաբերյալ գործողությունների ծրագրի շրջանակում Համայնքի մակարդակով բնապահպանական համաձայնագրեր» կոչվող հաղորդագրությունը կարող է

օգտակար ուղեցույց լինել սույն Հրահանգի համատեքստում արդյունաբերության կողմից ինքնակարգավորումը գնահատելիս,

22) սույն Հրահանգը պետք է նաև խրախուսի փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ–ներ) և շատ փոքր ընկերությունների շրջանում էկոնախագծման միավորումը: Այս միավորումը կարող է դյուրացվել իրենց արտադրանքների կայունության վերաբերյալ տեղեկատվության լայնածավալ հասանելիության և դյուրամատչելիության միջոցով,

23) սույն Հրահանգի կիրարկումն ապահովող միջոցներով նախատեսված էկոնախագծման պահանջներին համապատասխանող՝ էներգիայով աշխատող արտադրանքները պետք է կրեն «CE» մակնշումը և համապատասխան տեղեկություններ, որպեսզի դրանք կարողանան հանվել ներքին շուկա և ազատ տեղաշարժվել: Կիրարկումն ապահովող միջոցների ճշգրիտ կիրառումն անհրաժեշտ է շրջակա միջավայրի վրա էներգիայով աշխատող կարգավորված արտադրանքների ազդեցությունը նվազեցնելու և արդար մրցակցություն ապահովելու համար,

24) կիրարկումն ապահովող միջոցներն ու աշխատանքային պլանը պատրաստելիս Հանձնաժողովը պետք է խորհրդակցի անդամ պետությունների ներկայացուցիչների, ինչպես նաև արտադրանքների այնպիսի խմբերով շահագրգռված կողմերի հետ, ինչպիսիք են արդյունաբերությունը՝ ներառյալ ՓՄՁ-ները և նավարդյունաբերությունը, արհեստակցական միությունները, առևտրականները, մանրածախ վաճառողները, բնապահպանական խմբերը և սպառողների կազմակերպությունները,

25) կիրարկումն ապահովող միջոցները պատրաստելիս Հանձնաժողովը պետք է նաև պատշաճ ձևով հաշվի առնի շրջակա միջավայրի վերաբերյալ առկա ներպետական օրենսդրությունը, մասնավորապես, երբ խոսքը վերաբերում է թունավոր նյութերին, որոնք անդամ պետությունների կարծիքով պետք է պահպանվեն՝ չնվազեցնելով անդամ պետություններում պաշտպանության առկա և հիմնավորված մակարդակները,

26) անհրաժեշտ է հաշվի առնել «Արտադրանքների շուկայահանման ընդհանուր շրջանակի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 թվականի հուլիսի 9-ի թիվ 768/2008/ԵՀ որոշման [5] մեջ նշված տեխնիկապես ներդաշնակեցված հրահանգներում գործածվելու նպատակով ստեղծված մոդուլներն ու կանոնները,

27) վերահսկողության մարմինները պետք է սույն Հրահանգի գործողության ոլորտով նախատեսված միջոցների վերաբերյալ տեղեկություններ փոխանակեն՝ նպատակ ունենալով բարելավելու շուկայի վերահսկողությունը՝ հաշվի առնելով արտադրանքների

շուկայահանման հետ կապված հավատարմագրման և շուկայի վերահսկողության պահանջները սահմանող Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 թվականի հուլիսի 9-ի թիվ 765/2008 (ԵՀ) կանոնակարգը [6]: Այս համագործակցությունը պետք է առավելագույնս օգտագործի հաղորդակցության էլեկտրոնային միջոցներն ու Համայնքի համապատասխան ծրագրերը: Կյանքի պարբերաշրջանի ընթացքում բնապահպանական առանձնահատկությունների և նախագծման լուծումների ձեռքբերման վերաբերյալ տեղեկությունների փոխանակումը պետք է դյուրացվի: Արտադրողների կողմից էկոնախագծման համար գործադրած ջանքերից առաջացած գիտելիքների պաշարի կուտակումը և տարածումը սույն Հրահանգի կարևորագույն օգուտներից մեկն է,

28) իրավասու մարմինը սովորաբար պետական կամ մասնավոր մարմին է՝ նշանակված պետական իշխանությունների կողմից, որն անհրաժեշտ երաշխիքներ է ներկայացնում արտադրանքների ստուգման տեխնիկական փորձագիտության անկողմնակալության և մատչելիության համար՝ կապված կիրարկումն ապահովող կիրառելի միջոցների հետ համապատասխանության հետ,

29) հաշվի առնելով անհամապատասխանությունից խուսափելու կարևորությունը՝ անդամ պետությունները պետք է ապահովեն, որ շուկայի արդյունավետ վերահսկողության համար անհրաժեշտ միջոցները լինեն հասանելի,

30) ՓՄՁ-ների համար էկոնախագծման վերաբերյալ դասընթացներ և տեղեկատվության ապահովելու առումով գուցե ուղեկցող գործողությունները հաշվի առնելու անհրաժեշտություն լինի,

31) ներքին շուկայի գործունեության շահերից է բխում այնպիսի ստանդարտներ ունենալը, որոնք ներդաշնակեցվել են Համայնքի մակարդակով: Եթե այս ստանդարտներին ուղղված հղումը հրապարակվել է Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում, դրա հետ համապատասխանությունը պետք է առաջ բերի սույն Հրահանգի հիման վրա ընդունված կիրարկումն ապահովող միջոցներով նախատեսված համապատասխան պահանջների հետ համապատասխանության կանխավարկածը, թեև այդ համապատասխանությունը երևան հանող այլ միջոցները նույնպես պետք է թույլ տրվեն,

32) ներդաշնակեցված ստանդարտների հիմնական դերերից մեկը պետք է սույն Հրահանգի համաձայն ընդունված կիրարկումն ապահովող միջոցների կիրառման հարցում արտադրողներին օգնելը լինի: Այս ստանդարտները կարող են կարևոր լինել միջոցներ և փորձարկման մեթոդներ սահմանելիս: Էկոնախագծման ընդհանուր պահանջների դեպքում

ներդաշնակեցված ստանդարտները կարող են էապես նպաստել իրենց արտադրանքների էկոլոգիական նկարագիրը կիրարկումն ապահովող համապատասխան միջոցների համաձայն սահմանելու հարցում արտադրողներին ուղղորդելուն: Այս ստանդարտները կարող են հստակ նշել իրենց դրույթների և իրենց վերաբերող պահանջների միջև հարաբերությունները: Ներդաշնակեցված ստանդարտների նպատակը չպետք է բնապահպանական ասպեկտների համար սահմաններ սահմանելը լինի,

33) սույն Հրահանգի սահմանումների նպատակով օգտակար է համապատասխան միջազգային ստանդարտներին հղում կատարելը, ինչպիսին է ՍՄԿ 14040,

34) սույն Հրահանգը, համաձայն կոնկրետ սկզբունքների, նախատեսված է «Տեխնիկական ներդաշնակեցման և ստանդարտների նկատմամբ նոր մոտեցման մասին» Խորհրդի 1985 թվականի մայիսի 7-ի որոշման [7] մեջ նշված նոր մոտեցման իրականացման և Եվրոպական ներդաշնակեցված ստանդարտներին հղում կատարելու համար: «Եվրոպայում ստանդարտացման դերի մասին» Խորհրդի 1999 թվականի հոկտեմբերի 28-ի որոշումն [8] առաջարկում է, որ Հանձնաժողովն ուսումնասիրի, թե արդյոք Նոր մոտեցման սկզբունքը կարող է տարածվել այն բաժինների վրա, որոնք դեռևս չեն համարվում անհրաժեշտության դեպքում օրենսդրությունը բարելավելու կամ պարզեցնելու միջոց,

35) սույն Հրահանգը համալրում է Համայնքի առկա փաստաթղթերին, ինչպիսիք են՝ «Պիտակավորմամբ և արտադրանքի ստանդարտ տեղեկությունների միջոցով կենցաղային տեխնիկայի էներգիայի սպառման և այլ ռեսուրսների վերաբերյալ նշման մասին» Խորհրդի 1992 թվականի սեպտեմբերի 22-ի 92/75/ԵՏՀ հրահանգը [9], «Համայնքի էկոպիտակավորման շնորհման վերանայված համակարգի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2000 թվականի հուլիսի 17-ի թիվ 1980/2000 (ԵՀ) կանոնակարգը [10], «Էլեկտրական և էլեկտրոնային սարքերի թափոնների մասին» (ԷԷՍԹ) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հունվարի 27-ի 2002/96/ԵՀ հրահանգը [11], «Էլեկտրական եւ էլեկտրոնային սարքավորումներում որոշակի վնասակար նյութերի օգտագործումը սահմանափակելու մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հունվարի 27-ի 2002/95/ԵՀ հրահանգը [12], «Քիմիական նյութերի գրանցման, գնահատման, թույլտվության և սահմանափակման (REACH) և Քիմիական նյութերի եվրոպական գործակալություն ստեղծելու մասին» թիվ 1907/2006/ԵՀ Կանոնակարգին հարմարեցնելու նպատակով «Վտանգավոր նյութերի դասակարգմանը, փաթեթավորմանը և մակնշմանը վերաբերող օրենքների, կանոնակարգերի և վարչական դրույթների համապատասխանեցման մասին» Խորհրդի 67/548/ԵՏՀ հրահանգը փոփոխող

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 18-ի 2006/121/ԵՀ հրահանգը [13] և «Գրասենյակային սարքերի համար էներգաարդյունավետության պիտակավորման Համայնքային ծրագրի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 106/2008 (ԵՀ) կանոնակարգը [14]: Սույն Հրահանգի և Համայնքի գոյություն ունեցող փաստաթղթերի միջև սիներգիաները պետք է նպաստեն դրանց համապատասխան ազդեցությունների և արտադրողների կողմից կիրառելու համար նախատեսված համահունչ պահանջների ստեղծման բարձրացմանը,

36) սույն Հրահանգի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները պետք է ընդունվեն Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշման համաձայն, որը սահմանում է Հանձնաժողովին վերապահված կիրարկման լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը [15],

37) մասնավորապես, Հանձնաժողովը պետք է իրավասու լինի փոփոխություններ կատարելու կամ ուժը կորցրած ճանաչելու Խորհրդի 92/42/ԵՏՀ հրահանգը [16], Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 96/57/ԵՀ [17] և 2000/55/ԵՀ [18] հրահանգները: Ուժը կորցրած ճանաչելը կամ այս փոփոխությունները պետք է ընդունվեն 1999/468/ԵՀ որոշման 5ա հոդվածով նախատեսված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան,

38) բացի այդ, Հանձնաժողովը պետք է իրավասություն ունենա ընդունելու կիրարկումն ապահովող միջոցներ, որոնք սահմանում են էներգիայով աշխատող կոնկրետ արտադրանքների էկոնախագծման պահանջները՝ ներառյալ անցումային ժամանակահատվածում կիրարկումն ապահովող միջոցների ներկայացումը և, անհրաժեշտության դեպքում, ներառյալ բնապահպանական տարբեր ասպեկտները հավասարակշռության բերելու վերաբերյալ դրույթները: Քանի որ այդ ակտերն ընդհանուր բնույթ են կրում և նախատեսված են սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու և՛ ի թիվս այլոց, այն նոր, ոչ էական տարրերով լրացնելու համար, ապա դրանք պետք է ընդունվեն 1999/468/ԵՀ որոշման 5ա հոդվածով նախատեսված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորման ընթացակարգի համաձայն,

39) Հանձնաժողովը պետք է, սույն Հրահանգի, 2005/32/ԵՀ հրահանգի և կիրարկումն ապահովող միջոցների կիրառման ընթացքում ձեռք բերված փորձի հիման վրա, վերանայի սույն Հրահանգի գործընթացը, մեթոդներն ու արդյունավետությունը և գնահատի դրա գործողության ոլորտը էներգիայով աշխատող արտադրանքներից այն կողմ տարածելու

պատշաճությունը: Վերանայման ընթացքում Հանձնաժողովը պետք է խորհրդակցի անդամ պետությունների ներկայացուցիչների, ինչպես նաև շահագրգիռ կողմերի հետ,

40) անդամ պետությունները սահմանում են սույն Հրահանգին համապատասխան ընդունված ազգային դրույթների խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցները: Այդ պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համարժեք և տարհամոզիչ,

41) քանի որ սույն Հրահանգի նպատակը, այն է՝ ապահովել ներքին շուկայի գործունեությունը՝ պահանջելով, որ արտադրանքն ունենա բնապահպանական առանձնահատկությունների համապատասխան մակարդակ, չի կարող բավարար կերպով իրականացվել առանձին անդամ պետությունների կողմից, և, հետևաբար, գործողության ծավալի և ազդեցության նկատառումներով, կարող է առավել լավ իրականացվել Համայնքի մակարդակով, Համայնքը կարող է միջոցներ ընդունել՝ Պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված սուբսիդիարության սկզբունքին համապատասխան: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին համապատասխան՝ սույն Հրահանգը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է նշված նպատակին հասնելու համար,

42) ազգային իրավունքում սույն Հրահանգը փոխատեղելու պարտավորությունը տարածվում է դրա այն դրույթների վրա, որոնք 2005/32/ԵՀ հրահանգի համեմատությամբ էապես տարբեր նորմեր են սահմանում:

43) սույն Հրահանգը չպետք է հակասի IX հավելվածի Բ մասով սահմանված՝ հրահանգները ազգային իրավունքում փոխատեղելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին,

44) «Բարելավված օրինաստեղծ գործունեության մասին» միջինստիտուցիոնալ համաձայնագրի 34-րդ կետին համապատասխան [19]՝ անդամ պետություններին պետք է խրախուսել, ելնելով իրենց և Համայնքի շահերից, կազմել սույն Հրահանգի և փոխատեղման միջոցների համեմատական աղյուսակներ և հրապարակել դրանք,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Կարգավորման առարկան և գործողության ոլորտը

1. Սույն Հրահանգը սահմանում է էներգիայով աշխատող արտադրանքների Համայնքի էկոնախագծման պահանջների շրջանակը՝ նպատակ ունենալով ապահովելու այդ արտադրանքների ազատ տեղաշարժը ներքին շուկայում:
2. Սույն Հրահանգն ապահովում է այն պահանջների սահմանումը, որոնց կիրարկումն ապահովող միջոցների շրջանակում ընդգրկված էներգիայով աշխատող արտադրանքները պետք է բավարարեն, որպեսզի այդ արտադրանքները շուկայահանվեն և (կամ) գործածության մեջ դրվեն: Սա նպաստում է էներգաարդյունավետության և շրջակա միջավայրի պաշտպանության մակարդակի բարձրացման միջոցով կայուն զարգացմանը՝ միևնույն ժամանակ բարձրացնելով էներգիայի մատակարարման անվտանգությունը:
3. Սույն Հրահանգը չի տարածվում մարդկանց և ապրանքների համար նախատեսված տրանսպորտային միջոցների վրա:
4. Սույն Հրահանգը և դրա համաձայն ընդունված կիրարկումն ապահովող միջոցները չպետք է հակասեն թափոնների կառավարման մասին Համայնքի օրենսդրությանն ու քիմիական նյութերի մասին Համայնքի օրենսդրությանը՝ ներառյալ ֆտորացված ջերմոցային գազերի մասին Համայնքի օրենսդրությունը:

Հոդված 2

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակներով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

1. «Էներգիայով աշխատող արտադրանք» («արտադրանք») նշանակում է որևէ ապրանք, որն իր գործածության ընթացքում էներգիա է սպառում, որը շուկայահանվում և (կամ) գործողության մեջ է դրվում, ինչպես նաև ներառում է այնպիսի մասեր, որոնք նախատեսված են սույն Հրահանգով նախատեսված էներգիայով աշխատող արտադրանքներում ներառվելու համար, որոնք շուկայահանվում և (կամ) գործածության մեջ են դրվում որպես վերջնական սպառողների համար նախատեսված առանձին մասեր, և որոնց բնապահպանական առանձնահատկությունները կարող են առանձին գնահատվել

2. «Բաղադրիչներ և ենթամասեր» նշանակում է այնպիսի մասեր, որոնք նախատեսված են ընդգրկվելու համար այն արտադրանքների մեջ, որոնք վերջնական սպառողների համար չեն շուկայահանվում և (կամ) գործածության մեջ դրվում որպես առանձին մասեր կամ որոնց բնապահպանական առանձնահատկությունները չեն կարող առանձին գնահատվել
3. «Կիրարկումն ապահովող միջոցներ» նշանակում է միջոցներ, որոնք ընդունվել են սույն Հրահանգի համաձայն, որը սահմանում է հստակ արտադրանքների կամ դրանց բնապահպանական ասպեկտների էկոնախագծման պահանջները
4. «Շուկայահանում» նշանակում է արտադրանքն առաջին անգամ հասանելի դարձնել Համայնքի շուկայում՝ Համայնքի տարածքում այդ արտադրանքը բաշխելու կամ օգտագործելու նպատակով՝ անկախ այն հանգամանքից դա կատարվում է վճարովի, թե անվճար հիմունքով և անկախ վաճառքի տեխնիկայից
5. «Գործածության մեջ դնել» նշանակում է Համայնքում որևէ վերջնական սպառողի կողմից արտադրանքի առաջին անգամ օգտագործումն իր նպատակային նշանակությամբ
6. «Արտադրող» նշանակում է այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, ով սույն Հրահանգով նախատեսված արտադրանքներ է արտադրում և պատասխանատու է այդ արտադրանքների՝ սույն Հրահանգի հետ համապատասխանության համար՝ հաշվի առնելով, որ այդ արտադրանքները շուկայահանվում և (կամ) գործածության մեջ են դրվում արտադրողի սեփական անվան կամ ապրանքային նշանի ներքո կամ հենց արտադրողի իր իսկ օգտագործման համար: Սույն կետի առաջին նախադասությամբ սահմանված արտադրողի կամ 8-րդ կետով սահմանված ներկրողի բացակայության դեպքում ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով սույն Հրահանգով նախատեսված արտադրանքներ է շուկայահանում և (կամ) գործածության մեջ դնում, համարվում է արտադրող
7. «Լիազորված ներկայացուցիչ» նշանակում է Համայնքում նշանակված որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով արտադրողի անունից հանդես գալու գրավոր մանդատ է ստացել՝ սույն Հրահանգի հետ կապված պարտավորություններն ու ծնականություններն ամբողջությամբ կամ մասամբ իրականացնելու համար
8. «Ներկրող» նշանակում է Համայնքում նշանակված որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով իր գործունեության ընթացքում երրորդ երկրից ստացված արտադրանքը շուկայահանում է Համայնքի շուկա.

9. «Նյութեր» նշանակում է բոլոր այն նյութերը, որոնք օգտագործվում են արտադրանքի կյանքի պարբերաշրջանի ընթացքում
10. «Արտադրանքի նախագիծ» նշանակում է գործընթացների համալիր, երբ արտադրանքների համար նախատեսված իրավական, տեխնիկական, անվտանգության, ֆունկցիոնալ, շուկայական կամ այլ պահանջները փոխակերպվում են այդ արտադրանքի տեխնիկական մասնագրերի
11. «Բնապահպանական ասպեկտ» նշանակում է արտադրանքի որևէ տարր կամ գործառույթ, որը կարող է իր կյանքի պարբերաշրջանի ընթացքում փոխազդել շրջակա միջավայրի հետ
12. «Շրջակա միջավայրի վրա ազդեցություն» նշանակում է շրջակա միջավայրի հետ կատարվող որևէ փոփոխություն, որն ամբողջությամբ կամ մասնակիորեն տեղի է ունենում արտադրանքի պատճառով իր կյանքի պարբերաշրջանի ընթացքում
13. «Կյանքի պարբերաշրջան» նշանակում է արտադրանքի հումքի օգտագործումից մինչև վերջնական հեռացումն ընկած հաջորդական և փոխկապակցված փուլերը
14. «Վերաօգտագործում» նշանակում է որևէ գործողություն, որի միջոցով արտադրանքը կամ դրա բաղադրիչները, սպառած լինելով իրենց առաջին օգտագործումը, օգտագործվում են այն նույն նպատակով, որի համար դրանք նախատեսված են՝ ներառյալ այն արտադրանքի շարունակական օգտագործումը, որը վերադարձվել է ընդունման կետ, մատակարարին, վերամշակողին կամ արտադրողին, ինչպես նաև արտադրանքի լրիվ վերականգնումից հետո ստացված արտադրանքի վերաօգտագործումը.
15. «Վերաօգտագործում» նշանակում է արտադրական գործընթացում թափոնների վերամշակում սկզբնական կամ այլ նպատակներով՝ բացառությամբ էներգիայի վերականգնումը
16. «Էներգիայի վերականգնում» նշանակում է կամ այլ թափոնների հետ կամ առանց այլ թափոնների այրվող թափոնների՝ ուղղակի այրման միջոցով օգտագործումը որպես էներգիա ստանալու միջոց՝ ջերմության վերականգնմամբ
17. «Վերականգնում» նշանակում է Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի ապրիլի 5-ի «Թափոնների մասին» 2006/12/ԵՀ հրահանգի [20] II Բ հավելվածով նախատեսված կիրառելի որևէ գործողություն

18. «Թափոն» նշանակում է 2006/12/ԵՀ հրահանգի I հավելվածով նախատեսված կատեգորիաներին պատկանող որևէ նյութ կամ օբյեկտ, որը սեփականատերը դեռ է նետում որպես թափոն, նպատակ ունի կամ պարտավոր է դեռ նետելու.

19. «Վտանգավոր թափոն» նշանակում է որևէ թափոն, որը սահմանված է «Վտանգավոր թափոնների մասին» Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 12-ի 91/689/ԵՏՀ հրահանգի 1(4) հոդվածով [21]

20. «Էկոլոգիական նկարագիր» նշանակում է արտադրանքի կյանքի պարբերաշրջանի ընթացքում ներհոսքերի և արտահոսքերի (ինչպես օրինակ՝ նյութերի, արտանետումների ու թափոնների) նկարագիր, որոնք, համաձայն արտադրանքի նկատմամբ կիրառվող կիրարկումն ապահովող միջոցների, շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության տեսանկյունից զգալի քանակ ունեն և արտահայտված են ֆիզիկական այնպիսի մեծություններով, որոնք կարող են չափվել.

21. «Արտադրանքի բնապահպանական առանձնահատկություններ» նշանակում է արտադրողի կողմից արտադրանքի բնապահպանական ասպեկտների կառավարման արդյունքներ, ինչպես արտացոլված է դրա տեխնիկական փաստաթղթերի պանակում.

22. «Բնապահպանական առանձնահատկությունների բարելավում» նշանակում է արտադրանքի յուրաքանչյուր հաջորդ արտադրության ժամանակ բնապահպանական առանձնահատկությունների բարելավում, թեև պարտադիր չէ, որ այդ բարելավումը կատարվի արտադրանքի բնապահպանական բոլոր ասպեկտներում միաժամանակ

23. «Էկոնախագծում» նշանակում է բնապահպանական ասպեկտների ինտեգրումը արտադրանքի նախագծում՝ նպատակ ունենալով բարելավելու արտադրանքի բնապահպանական առանձնահատկություններն իր կյանքի ողջ պարբերաշրջանի ընթացքում

24. «Էկոնախագծման պահանջներ» նշանակում է արտադրանքին կամ արտադրանքի նախագծին վերաբերող որևէ պահանջ, որի նպատակն է բարելավել արտադրանքի բնապահպանական առանձնահատկությունները, կամ արտադրանքի բնապահպանական ասպեկտների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման համար նախատեսված որևէ այլ պահանջ

25. «Էկոնախագծման ընդհանուր պահանջ» նշանակում է էկոնախագծման որևէ պահանջ, որն ընդհանուր առմամբ հիմնված է արտադրանքի էկոլոգիական նկարագրի հիման վրա՝

առանց բնապահպանական կոնկրետ ասպեկտների համար սահմանված սահմանային թույլատրելի արժեքների.

26. «Էկոնախագծման կոնկրետ պահանջ» նշանակում է էկոնախագծման քանակական և էական պահանջ, որը վերաբերում է արտադրանքի բնապահպանական կոնկրետ ասպեկտներին, ինչպես օրինակ՝ դրա օգտագործման ընթացքում էներգիայի սպառումը՝ հաշվարկված արտադրանքի իրականացման կոնկրետ միավորի համար

27. «Ներդաշնակեցված ստանդարտ» նշանակում է տեխնիկական մասնագիր, որն ընդունվել է ներդաշնակեցման լիազոր մարմնի կողմից Հանձնաժողովից ստացված մանդատի ներքո՝ համաձայն Տեխնիկական ստանդարտների և կանոնակարգերի, ինչպես նաև տեղեկատվական հասարակության ծառայությունների կանոնների բնագավառում տեղեկատվության տրամադրման ընթացակարգը սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1998թ. հունիսի 22-ի 98/34/ԵՀ հրահանգի [22]՝ նպատակ ունենալով սահմանելու Եվրոպական պահանջներ, որոնց հետ համապատասխանությունը պարտադիր չէ:

Հոդված 3

Շուկայահանումը և (կամ) շահագործումը

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցառումները՝ ապահովելու, որ կիրարկումն ապահովող միջոցների շրջանակում ընդգրկված արտադրանքները կարող են շուկայահանվել և (կամ) գործածության մեջ դրվել միայն այն դեպքում, եթե դրանք համապատասխանում են այդ միջոցներին և կրում են «CE» մակնշումը՝ համաձայն 5-րդ հոդվածի:

2. Անդամ պետությունները շուկայի վերահսկողության համար պատասխանատու մարմիններ են նշանակում: Նրանք ապահովում են, որ այդ մարմիններն ունենան և օգտագործեն սույն Հրահանգով սահմանված անհրաժեշտ լիազորությունները՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու համար: Անդամ պետությունները սահմանում են այն իրավասու մարմինների խնդիրները, լիազորությունները և կազմակերպչական խնդիրները, որոնք իրավասու են՝

ա) կազմակերպելու արտադրանքի համապատասխանության համար անհրաժեշտ չափերով համապատասխան ստուգումներ և պարտավորեցնելու արտադրողին կամ վերջինիս լիազոր

ներկայացուցին շուկայից հետ կանչել ոչ համապատասխան արտադրանքը՝ համաձայն 7-րդ հոդվածի,

բ) պահանջելու համապատասխան մարմիններից, որ վերջիններս ապահովեն կիրարկումն ապահովող միջոցներով նախատեսված անհրաժեշտ բոլոր տեղեկությունները,

գ) վերցնելու արտադրանքի նմուշներ և դրանք ենթարկելու համապատասխանության ստուգումների:

3. Անդամ պետությունները Հանձնաժողովին տեղեկացնում են շուկայի վերահսկողության արդյունքների մասին, և Հանձնաժողովը, անհրաժեշտության դեպքում, այդ տեղեկությունները տրամադրում է այլ անդամ պետություններին:

4. Անդամ պետություններն ապահովում են, որ սպառողները և այլ շահագրգիռ կողմերը հնարավորություն ունենան արտադրանքի համապատասխանության վերաբերյալ դիտողություններ ներկայացնելու իրավասու մարմիններին:

Հոդված 4

Ներմուծողի պարտականությունները

Եթե արտադրողը հաստատված չէ Համայնքում, և բացակայում է լիազոր ներկայացուցիչը, ներմուծողը ստանձնում է հետևյալ պարտավորությունները՝

ա) ապահովել, որ շուկայահանված և (կամ) գործածության մեջ դրված արտադրանքը համապատասխանի սույն Հրահանգի և դրա կիրարկումն ապահովող համապատասխան միջոցների հետ,

բ) պահպանել և հասանելի դարձնել համապատասխանության վերաբերյալ ԵԽ հայտարարագիրն ու տեխնիկական փաստաթղթերը:

Հոդված 5

Դրոշմակնքումը և համապատասխանության վերաբերյալ ԵԽ հայտարարագիրը

1. Նախքան կիրարկումն ապահովող միջոցների շրջանակում ընդգրկված արտադրանքի շուկայահանումը և (կամ) գործածության մեջ դնելը, դրա վրա փակցվում է «CE» մականշումը և ներկայացվում է համապատասխանության վերաբերյալ ԵԽ հայտարարագիրը, որոնցով

արտադրողը կամ նրա լիազոր ներկայացուցիչն ապահովում և հայտարարում են, որ արտադրանքը համապատասխանում է կիրարկումն ապահովող համապատասխան միջոցների համապատասխան բոլոր դրույթներին:

2. «CE» մակնշումը բաղկացած է «CE» սկզբնատառերից՝ ինչպես ներկայացված է III հավելվածում:

3. Համապատասխանության վերաբերյալ ԵԽ հայտարարագիրը պարունակում է VI հավելվածով նախատեսված տարրեր և վերաբերում է կիրարկումն ապահովող համապատասխան միջոցներին:

4. Արգելվում է արտադրանքի վրա այնպիսի դրոշմակնիքներ փակցնելը, որոնք կարող են «CE» մակնշման իմաստի կամ ձևի հետ կապված շփոթության մեջ գցել օգտագործողներին:

5. Անդամ պետությունները կարող են պահանջել, որ I հավելվածի 2-րդ մասի համաձայն տրամադրվող տեղեկությունները լինեն իրենց պաշտոնական լեզվով (լեզուներով), երբ արտադրանքը հասնում է վերջնական սպառողին:

Անդամ պետությունները կարող են նաև թույլ տալ, որ այս տեղեկատվության դրույթը հասանելի լինի Եվրոպական միության կառույցների պաշտոնական մեկ կամ ավելի այլ լեզուներով:

Առաջին երթապարբերությունը կիրառելիս անդամ պետությունները, մասնավորապես, հաշվի են առնում՝

ա) արդյոք տեղեկությունները կարող են տրամադրվել ներդաշնակեցված խորհրդանիշներով կամ ընդունված ծածկագրերով կամ էլ այլ միջոցներով,

բ) արտադրանքն օգտագործողի էությունը և տրամադրվող տեղեկատվության բնույթը:

Հոդված 6

Ազատ տեղաշարժը

1. Անդամ պետությունները չեն արգելում, սահմանափակում կամ խոչընդոտում իրենց տարածքում այն արտադրանքի շուկայահանումը և (կամ) գործածության մեջ դնելը, որը համապատասխանում է կիրարկումն ապահովող համապատասխան միջոցների համապատասխան բոլոր դրույթներին և, համաձայն 5-րդ հոդվածի, կրում է «CE»

մակնշումը՝ հիմնվելով I հավելվածի 1-ին մասով նախատեսված էկոնախագծման պարամետրերին առնչվող էկոնախագծման պահանջների վրա, որոնք գտնվում են կիրարկումն ապահովող կիրառելի միջոցների շրջանակներում:

2. Անդամ պետությունները չեն արգելում, սահմանափակում կամ խոչընդոտում 5-րդ հոդվածի համաձայն «CE» մակնշումը կրող արտադրանքի՝ իրենց տարածքում շուկայահանումը և (կամ) գործածության մեջ դնելը՝ հիմնվելով I հավելվածի 1-ին մասով նախատեսված էկոնախագծման պարամետրերին առնչվող էկոնախագծման պահանջների վրա, որոնց համար կիրարկումն ապահովող համապատասխան միջոցն ապահովում է, որ էկոնախագծման պահանջն անհրաժեշտ չէ:

3. Անդամ պետությունները չպետք է խոչընդոտեն կիրարկումն ապահովող համապատասխան միջոցներին չհամապատասխանող արտադրանքի ցուցադրությանը օրինակ՝ տոնավաճառներում, ցուցահանդեսներում և ցուցադրություններում՝ պայմանով, որ կա տեսողական ցուցանշում, որ դրանք չեն կարող շուկայահանվել և (կամ) գործածության մեջ դրվել մինչև չհամապատասխանեցվեն:

Հոդված 7

Պաշտպանիչ դրույթը

1. Եթե որևէ անդամ պետություն համոզվում է, որ 5-րդ հոդվածի համաձայն «CE» մակնշումը կրող և իր նպատակային նշանակությամբ օգտագործվող արտադրանքը չի համապատասխանում կիրարկումն ապահովող կիրառելի միջոցի բոլոր համապատասխան դրույթներին, արտադրողը կամ իր լիազոր ներկայացուցիչը պետք է պարտավորվեն համապատասխանեցնել արտադրանքը կիրարկումն ապահովող համապատասխան միջոցի դրույթներին և (կամ) «CE» մակնշմանը և վերացնել խախտումները՝ անդամ պետությունների կողմից սահմանված պայմանների համաձայն:

Եթե բավարար ապացույց կա, որ արտադրանքը կարող է անհամապատասխան լինել, անդամ պետությունը պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի, որոնք, կախված անհամապատասխանության աստիճանից, կարող են այնքան հեռու գնալ, ինչպես օրինակ տվյալ ապրանքի շուկայահանումն արգելելն է, մինչև որ այն չհամապատասխանեցվի:

Եթե անհամապատասխանությունը շարունակվում է, անդամ պետությունը պետք է այդ արտադրանքի շուկայահանումը և (կամ) գործունեության մեջ դնելը սահմանափակելու կամ արգելելու վերաբերյալ որոշում կայացնի կամ ապահովի, որ այն հետ կանչվի շուկայից:

Արգելքի կամ շուկայից հետկանչի դեպքում Հանձնաժողովը և այլ անդամ պետությունները պետք է անմիջապես տեղեկացվեն այդ մասին:

2. Սույն Հրահանգի համաձայն անդամ պետության կայացրած ցանկացած որոշման մեջ, որը սահմանափակում կամ արգելում է արտադրանքի շուկայահանումը կամ գործունեության մեջ դնելը, պետք է նշվեն այն հիմքերը, որոնց վրա այն հիմնվում է:

Այս որոշման մասին անմիջապես պետք է տեղեկացնել շահագրգիռ կողմին, որը միաժամանակ տեղեկացվում է իրեն համար մատչելի իրավական պաշտպանության միջոցների և նման իրավական պաշտպանության միջոցների նկատմամբ կիրառելի ժամանակային սահմանափակումների մասին՝ համաձայն տվյալ անդամ պետությունում գործող օրենքների:

3. Անդամ պետությունը պետք է անմիջապես տեղեկացնի Հանձնաժողովին և այլ անդամ պետություններին ցանկացած նման որոշման մասին՝ համաձայն 1-ին պարբերության՝ նշելով դրա պատճառները և, մասնավորապես, արդյոք անհամապատասխանությունը բխում է՝

ա) կիրարկումն ապահովող համապատասխան միջոցների պահանջները բավարարելու հարցում ձախողվելուց,

բ) 10 (2) հոդվածով նախատեսված ներդաշնակեցված ստանդարտների սխալ կիրառությունից,

գ) 10(2) հոդվածով նախատեսված ներդաշնակեցված ստանդարտներում առկա թերացումներից:

4. Հանձնաժողովն առանց հապաղելու պետք է խորհրդակցություններ սկսի շահագրգիռ կողմերի հետ և կարող է հենվել անկախ արտաքին փորձագետների կողմից տեխնիկական խորհրդատվության վրա:

Հետևելով խորհրդատվությանը՝ Հանձնաժողովը պետք է իր վերանայումների մասին անմիջապես տեղեկացնի որոշումը կայացրած անդամ պետությանն ու այլ անդամ պետություններին:

Եթե Հանձնաժողովը համարում է, որ որոշումը պատճառաբանված չէ, այն պետք է անդամ պետությանն անմիջապես տեղեկացնի այդ մասին:

5. Եթե սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված որոշումը հիմնված է ներդաշնակեցված ստանդարտներում առկա թերացումների հիման վրա, Հանձնաժողովը պետք է անհապաղ նախաձեռնի 10(2), (3) և (4) հոդվածով նախատեսվող ընթացակարգը: Հանձնաժողովը պետք է միննույն ժամանակ այդ մասին տեղեկացնի 19(1) հոդվածում նշված Կոմիտեին:

6. Անդամ պետությունները և Հանձնաժողովը պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն՝ արդարացված լինելու դեպքում երաշխավորելու համար այդ ընթացակարգի ժամանակ տրամադրվող տեղեկատվության գաղտնիությունը:

7. Սույն Հրահանգի համաձայն անդամ պետությունների կողմից կայացված որոշումները պետք է թափանցիկ կերպով մատչելի դարձվեն հանրությանը:

8. Այդ որոշումների վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությունը հրապարակվում է Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում:

Հոդված 8

Համապատասխանության գնահատումը

1. Նախքան կիրարկումն ապահովող միջոցների շրջանակում ընդգրկված արտադրանքը շուկայահանելը և (կամ) գործածության մեջ դնելը, արտադրողը կամ իր լիազոր ներկայացուցիչը պետք է ապահովի, որ իրականացվել է կիրարկումն ապահովող համապատասխան միջոցների համապատասխան բոլոր պահանջների հետ արտադրանքի համապատասխանության գնահատում:

2. Համապատասխանության գնահատման ընթացակարգը պետք է սահմանվի կիրարկումն ապահովող միջոցներով և պետք է արտադրողներին հնարավորություն թողնի ընտրելու սույն Հրահանգի IV հավելվածով նախատեսված նախագծման ներքին հսկողության և սույն Հրահանգի V հավելվածով նախատեսված կառավարման համակարգի միջև: Պատշաճ հիմնավորված լինելու և ռիսկերին համաչափ լինելու դեպքում համապատասխանության գնահատման ընթացակարգը սահմանվում է թիվ 768/2008/ԵՀ որոշման II հավելվածում նկարագրված համապատասխան մոդուլներով:

Եթե որևէ անդամ պետություն արտադրանքի անհամապատասխանության վերաբերյալ հստակ ցուցանշում ունի, ապա այդ անդամ պետությունը պետք է հնարավորինս շուտ հրապարակի արտադրանքի համապատասխանության վերաբերյալ հիմնավորված գնահատումը, որը կարող է իրականացնել իրավասու մարմինը, որպեսզի անհրաժեշտության դեպքում ժամանակավոր ուղղիչ գործողություններ թույլ տա:

Եթե կիրարկում ապահովող միջոցների շրջանակում ընդգրկված արտադրանքը նախագծված է Համայնքի էկոկառավարման և աուդիտի համակարգում (ՀԷԿԱՀ) կազմակերպությունների կամավոր մասնակցությունը թույլատրող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի մարտի 19-ի թիվ 761/2001 (ԵՀ) կանոնակարգի [23] համաձայն գրանցված որևէ կազմակերպության կողմից և նախագծման գործառույթն ընդգրկված է այդ գրանցման իրականացման շրջանակում, ապա համարվում է, որ այդ կազմակերպությունների կառավարման համակարգը համապատասխանում է սույն Հրահանգի V հավելվածով նախատեսված պահանջներին:

Եթե կիրարկում ապահովող միջոցների շրջանակում ընդգրկված արտադրանքը նախագծված է որևէ կազմակերպության կողմից, որն ունի կառավարման այնպիսի համակարգ, որն ընդգրկում է արտադրանքի նախագծման գործառույթը և որն իրականացվում է համաձայն ներդաշնակեցված ստանդարտների, որոնց համարները հրապարակվել են Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում, ապա համարվում է, որ կառավարման այդ համակարգը համապատասխանում է V հավելվածի համապատասխան պահանջներին:

3. Կիրարկում ապահովող միջոցների շրջանակում ընդգրկված արտադրանքը շուկայահանելուց և (կամ) գործածության մեջ դնելուց հետո արտադրողը կամ նրա լիազոր ներկայացուցիչը պետք է պահեն համապատասխանության համար իրականացված գնահատման փաստաթղթերն ու անդամ պետությունների կողմից իրականացրած վերահսկողության արդյունքում շնորհված համապատասխանության հայտարարագրերը այդ արտադրանքի վերջին արտադրումից հետո տասը տարի ժամկետով:

Համապատասխան փաստաթղթերը մատչելի են դարձվում անդամ պետության իրավասու մարմնի կողմից հարցումն ստանալուց հետո տասը օրվա ընթացքում:

4. Համապատասխանության գնահատման փաստաթղթերը և 5-րդ հոդվածում նշված ԵԽ համապատասխանության հայտարարագիրը կազմվում են Եվրոպական միության կառույցների պաշտոնական լեզուներից որևէ մեկով:

Հոդված 9

Համապատասխանության կանխավարկածը

1. Անդամ պետությունը 5-րդ հոդվածում նշված «CE» մակնշումը կրող արտադրանքը համարում է կիրարկումն ապահովող համապատասխան միջոցների համապատասխան/կոնկրետ դրույթներին համապատասխանող:
2. Անդամ պետությունները կիրարկումն ապահովող և ստանդարտների հետ առնչություն ունեցող համապատասխան միջոցների համապատասխան պահանջներին համապատասխանող են համարում այն արտադրանքը, որի նկատմամբ ներդաշնակեցված ստանդարտներ են կիրառվել և որոնց համարները հրապարակվել են Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում:
3. Այն արտադրանքները, որոնց թիվ 1980/2000 (ԵՀ) կանոնակարգի համաձայն Համայնքի Էկո-պիտակավորում է շնորհվել, համարվում են կիրարկումն ապահովող համապատասխան միջոցների Էկոնախագծման պահանջներին համապատասխանող այնքան ժամանակ, քանի դեռ այդ Էկո-պիտակը բավարարում է այդ պահանջները:
4. Սույն Հոդվածի համատեքստում համապատասխանության ենթադրության նպատակներով Հանձնաժողովը, գործելով 19(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն, կարող է որոշել, որ այլ Էկո-պիտակները բավարարում են թիվ 1980/2000 (ԵՀ) կանոնակարգի համաձայն շնորհվող Համայնքի Էկո-պիտակավորման համապատասխան պայմանները: Նման այլ Էկո-պիտակներ ստացած արտադրանքները համարվում են կիրարկումն ապահովող համապատասխան միջոցների Էկոնախագծման պահանջներին համապատասխանող այնքան ժամանակ, քանի դեռ այդ Էկո-պիտակը բավարարում է այդ պահանջները:

Հոդված 10

Ներդաշնակեցված ստանդարտներ

1. Անդամ պետությունները պետք է հնարավորինս ապահովեն անհրաժեշտ միջոցների ձեռնարկումը, որպեսզի շահագրգիռ կողմերը հնարավորություն ունենան ազգային մակարդակով խորհրդակցելու ներդաշնակեցված ստանդարտների պատրաստման և դիտանցման հարցերի շուրջ:

2. Եթե որևէ անդամ պետություն կամ Հանձնաժողովը համարում է, որ ներդաշնակեցված ստանդարտները, որոնց կիրառումը երթադրաբար բավարարում է կիրարկումն ապահովող միջոցների կոնկրետ դրույթները, ամբողջությամբ չեն բավարարում այս դրույթները, ապա տվյալ անդամ պետությունն ու Հանձնաժողովն այդ մասին տեղեկացնում են 98/34/ԵՀ հրահանգի 5-րդ հոդվածում նշված Մշտական կոմիտեին՝ նշելով դրա պատճառները: Կոմիտեն հանդես է գալիս հրատապ եզրակացությամբ:

3. Կոմիտեի եզրակացության համաձայն՝ Հանձնաժողովը պետք է որոշի արդյոք հրապարակել, չհրապարակել, սահմանափակումներով հրապարակել, պահպանել, թե հետ կանչել Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում նշված ներդաշնակեցված ստանդարտներին ուղղված հղումները:

4. Հանձնաժողովը պետք է ստանդարտացման Եվրոպական տվյալ մարմնին տեղեկացնի այդ մասին և, անհրաժեշտության դեպքում նոր մանդատ շնորհի՝ նպատակ ունենալով վերհիշելու նշված ներդաշնակեցված ստանդարտները:

Հոդված 11

Բաղադրիչների և ենթամասերի պահանջները

Կիրարկումն ապահովող միջոցները կարող են պահանջել, որ բաղադրիչներ և ենթամասեր շուկայահանող և (կամ) գործածության մեջ դնող արտադրողը կամ նրա լիազոր ներկայացուցիչը կիրարկումն ապահովող միջոցների շրջանակում ընդգրկված արտադրանք արտադրողին տրամադրի համապատասխան տեղեկություններ բաղադրիչների և ենթամասերի նյութական բաղադրության և էներգիայի սպառման մասին, դրանց նյութերի և (կամ) ռեսուրսների մասին:

Հոդված 12

Վարչական համագործակցությունն ու տեղեկատվության փոխանակումը

1. Անդամ պետությունները պետք է պատշաճ միջոցների ծեռնարկում ապահովեն, որպեսզի խրախուսեն սույն Հրահանգի իրականացման համար պատասխանատու մարմիններին համագործակցելու միմյանց հետ, ինչպես նաև տեղեկություններ տրամադրելու միմյանց ու

Հանձնաժողովին, որպեսզի հնարավոր լինի սույն Հրահանգի աշխատանքին և, մասնավորապես, 7-րդ հոդվածի կիրարկմանն աջակցելը:

Վարչական համագործակցությունն ու տեղեկատվության փոխանակումը պետք է առավելագույնս օգտվեն հաղորդակցության էլեկտրոնային միջոցներից և կարող են օգտվել Համայնքի համապատասխան ծրագրերից:

Անդամ պետությունները Հանձնաժողովին տեղեկացնում են սույն Հրահանգի կիրառման համար պատասխանատու մարմինների մասին:

2. Հանձնաժողովի և անդամ պետությունների միջև տեղեկությունների փոխանակման հստակ բնույթն ու կառուցվածքը որոշվում է 19(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն:

3. Հանձնաժողովը պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի՝ խրախուսելու և նպաստելու համար անդամ պետությունների միջև համագործակցությանը, ինչպես նշված է սույն հոդվածում:

Հոդված 13

Փոքր ու միջին ձեռնարկությունները

1. Այն ծրագրերի համատեքստում, որոնցից փոքր և միջին ձեռնարկություններն (ՓՄՁ-ներ) ու շատ փոքր ընկերությունները շահույթ ունեն, Հանձնաժողովը պետք է հաշվի առնի այն նախաձեռնությունները, որոնք օգնում են ՓՄՁ-ներին և շատ փոքր ընկերություններին համախմբելու բնապահպանական ասպեկտները՝ ներառյալ իրենց արտադրանքի նախագծման ընթացքում էներգաարդյունավետությունը:

2. Արտադրանքի ոլորտում ակտիվ ՓՄՁ-ների առանձնահատկություններն ընդգրկող ուղեցույցները կարող են ուղեկցել կիրարկումն ապահովող միջոցներին: Անհրաժեշտության դեպքում և համաձայն 1-ին պարբերության՝ Հանձնաժողովը կարող է հետազայում մասնագիտական/հատուկ նպատակների համար նախատեսվող նյութ արտադրել՝ դյուրացնելու համար ՓՄՁ-ների կողմից սույն Հրահանգի կիրառումը:

3. Անդամ պետությունները պետք է, մասնավորապես աջակցության ցանցերն ու կառույցներն ուժեղացնելու միջոցով, ՓՄՁ-ների և շատ փոքր ընկերություններին խրախուսեն հնարավորինս շուտ՝ դեռ արտադրանքի նախագծման փուլում, ընդունել

բնապահպանական տեսանկյունից անվնաս մոտեցում և այն հարմարեցնել Եվրոպայի հետագա օրենսդրությանը:

Հոդված 14

Սպառողներին տրամադրվող տեղեկատվությունը

Կիրարկումն ապահովող միջոցների համաձայն՝ արտադրողները պետք է իրենց համար հարմար եղանակով ապահովեն, որ արտադրանքների սպառողներին տրամադրվեն հետևյալները՝

ա) անհրաժեշտ տեղեկություններ այն դերի մասին, որ նա կարող է ունենալ արտադրանքի կայուն օգտագործման մեջ,

բ) եթե կիրարկումն ապահովող միջոցներն այդպես պահանջեն, արտադրանքի էկոլոգիական նկարագիրը և էկոնախագծման օգուտները:

Հոդված 15

Կիրարկումն ապահովող միջոցները

1. Եթե արտադրանքը բավարարում է սույն հոդվածի 2-րդ պարբերության մեջ թվարկված չափորոշիչները, այն պետք է ընդգրկվի կիրարկումն ապահովող միջոցների կամ ինքնակարգավորման միջոցների շրջանակներում՝ համաձայն սույն հոդվածի 3(բ) պարբերության: Կիրարկումն ապահովող այս միջոցներով սույն հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված ակտերը պետք է ընդունվեն՝ 19(3) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

2. 1-րդ պարբերության մեջ հիշատակված չափորոշիչները հետևյալն են՝

ա) արտադրանքը պետք է ներկայացնի վաճառքի և առևտրի զգալի ծավալներ՝ մասնավորապես՝ ավելի, քան տարեկան 200000 միավոր Համայնքի տարածքում՝ ամենավերջին հասանելի տվյալների համաձայն,

բ) արտադրանքը պետք է, հաշվի առնելով շուկայահանված և (կամ) գործածության մեջ դրված քանակությունները, մեծ ազդեցություն ունենա շրջակա միջավայրի վրա Համայնքի

տարածքում, ինչպես նախատեսված է թիվ 1600/2002/ԵՀ որոշման մեջ նշված Համայնքի ռազմավարական առաջնահերթություններով,

գ) արտադրանքը պետք է շրջակա միջավայրի վրա իր ունեցած ազդեցությունը բարելավելու իմաստով զգալի պոտենցիալ ներկայացնի՝ չպահանջելով լրացուցիչ ծախսեր՝ մասնավորապես հաշվի առնելով՝

ի) Համայնքի համապատասխան օրենսդրության բացակայությունը կամ խնդիրը հավուր պատշաճի ներկայացնելու գործում շուկայական ուժերի ծախողումը,

ii) շուկայում մատչելի համարժեք ֆունկցիոնալությամբ արտադրանքների բնապահպանական առանձնահատկությունների մեծ անհամաչափությունները:

3. Կիրարկումն ապահովող միջոցների նախագիծը կազմելիս Հանձնաժողովը պետք է հաշվի առնի 19(1) հոդվածում նշված Կոմիտեի հայտնած ցանկացած տեսակետը և հետագայում հաշվի առնի՝

ա) Համայնքի բնապահպանական առաջնահերթությունները, ինչպես օրինակ թիվ 1600/2002/ԵՀ որոշմամբ կամ Հանձնաժողովի Կլիմայի փոփոխության եվրոպական ծրագրով (ԿՓԵԾ) սահմանվածները,

բ) Համայնքի համապատասխան օրենսդրությունն ու ինքնակարգավորումը, ինչպես օրինակ կամավոր համաձայնագրերը, որոնք, 17-րդ հոդվածում նշված գնահատման համաձայն, ակնկալվում է, որ ավելի արագ և ավելի քիչ ծախսերով պետք է հասնեն քաղաքականության նպատակներին, քան պարտադիր պահանջները:

4. Կիրարկումն ապահովող միջոցների նախագիծը կազմելիս Հանձնաժողովը պետք է՝

ա) հաշվի առնի արտադրանքի կյանքի պարբերաշրջանը և դրա բնապահպանական բոլոր համապատասխան ասպեկտները, այդ թվում՝ էներգաարդյունավետությունը: Բնապահպանական ասպեկտների վերլուծության խորությունը և դրանց բարելավման իրագործելիությունը պետք է համամասն լինեն իրենց նշանակությանը: Արտադրանքի բնապահպանական էական ասպեկտների վերաբերյալ էկոնախագծման պահանջների ընդունումը չպետք է անհիմն հետաձգվի այլ ասպեկտների անորոշությունների պատճառով,

բ) իրականացնի գնահատում, որը հաշվի կառնի շրջակա միջավայրի վրա ազդեցությունը, սպառողներին և արտադրողներին՝ ներառյալ ՓՄՁ-ները՝ մրցունակության (ներառյալ

Համայնքի տարածքից դուրս գործող շուկաների հետ հարաբերությունները), նորարարության, շուկա մուտք գործելու և ծախսերի ու օգուտների առումով,

գ) հաշվի առնի շրջակա միջավայրի վերաբերյալ առկա ներպետական օրենսդրությունը, որն անդամ պետությունները համապատասխան են համարում,

դ) խորհրդակցություն իրականացնի բաժնետերերի հետ,

ե) կազմի կիրարկումն ապահովող միջոցների նախագծի բացատրական հուշագիրը՝ հիմնվելով (բ) կետում նշված գնահատման հիման վրա և

զ) սահմանի կիրարկման ամսաթիվը (ամսաթվերը), ցանկացած հերթական կամ անցումային միջոցներ կամ ժամանակաշրջաններ՝ հաշվի առնելով, մասնավորապես, ՓՄՁ-ների կամ հիմնականում ՓՄՁ-ների կողմից արտադրված արտադրանքի կոնկրետ խմբերի վրա հնարավոր ազդեցությունները:

5. Կիրարկումն ապահովող միջոցները պետք է բավարարեն հետևյալ բոլոր չափորոշիչները՝

ա) չպետք է որևէ բացասական ազդեցություն լինի օգտագործողի կողմից արտադրանքի ֆունկցիոնալության վրա,

բ) առողջությանը, անվտանգության ու շրջակա միջավայրի վրա չպետք է բացասական ազդեցություն լինի,

գ) չպետք է էական բացասական ազդեցություն լինի սպառողների վրա, մասնավորապես երբ խոսքը վերաբերում է արտադրանքի մատչելիությանն ու կյանքի պարբերաշրջանի ընթացքում կատարված ծախսերին,

դ) չպետք է բացասական ազդեցություն լինի արդյունաբերության մրցակցության վրա,

ե) սկզբունքորեն, էկոնախագծման պահանջների սահմանումը չպետք է արտադրողներին պարտադրի գույքային տեխնոլոգիաներ մշակել,

զ) արտադրողների վրա վարչական ոչ մի ավելորդ ծանրաբեռնվածություն չպետք է դրվի:

6. Կիրարկումն ապահովող միջոցները սահմանում են էկոնախագծման պահանջները՝ համաձայն I և (կամ) II հավելվածի:

Ընտրված բնապահպանական ասպեկտների համար անհրաժեշտ է սահմանել էկոնախագծման կոնկրետ պահանջներ, որոնք շրջակա միջավայրի վրա էական ազդեցություն ունեն:

Կիրարկումն ապահովող միջոցները կարող են ապահովել, որ I հավելվածի 1-ին մասում նշված էկոնախագծման համար որոշակիորեն սահմանված պարամետրերի համար էկոնախագծման պահանջներ անհրաժեշտ չեն:

7. Պահանջները պետք է ձևակերպվեն այնպես, որ շուկայի վերահսկողության համար պատասխանատու մարմինները կարողանան ստուգել արտադրանքի համապատասխանությունը կիրարկումն ապահովող միջոցների պահանջներին: Կիրարկումն ապահովող միջոցները պետք է նշեն, թե արդյոք ստուգումը կարելի է իրականացնել անմիջապես արտադրանքի օգնությամբ, թե տեխնիկական փաստաթղթերի հիման վրա:

8. Կիրարկումն ապահովող միջոցները պետք է պարունակեն VIII հավելվածում թվարկված տարրերը:

9. Կիրարկումն ապահովող միջոցները պատրաստելիս Հանձնաժողովի կիրառած համապատասխան ուսումնասիրություններն ու վերլուծությունները պետք է դարձվեն հանրության համար մատչելի՝ հատկապես հաշվի առնելով շահագրգիռ ՓՄՁ-ների կողմից մատչելիությունն ու գործածությունը:

10. Անհրաժեշտության դեպքում էկոնախագծման պահանջները սահմանող կիրարկումն ապահովող միջոցները պետք է բնապահպանական տարբեր ասպեկտները հավասարակշռության բերելու վերաբերյալ դրույթներ պարունակեն: Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված ակտերը պետք է ընդունվեն՝ 19(3) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Հոդված 16

Աշխատանքային պլանը

1. Համաձայն 15-րդ հոդվածում նշված չափորոշիչների և 18-րդ հոդվածում նշված Խորհրդատվական ֆորումի հետ խորհրդակցելուց հետո՝ Հանձնաժողովը պետք է, ոչ ուշ, քան մինչև 2011 թվականի հոկտեմբերի 21-ը, աշխատանքային պլան մշակի, որը պետք է հանրամատչելի դարձվի:

Աշխատանքային պլանը պետք է հետագա երեք տարիների համար արտադրանքի խմբերի ինդիկատիվ ցանկ սահմանի, որոնք կիրարկումն ապահովող միջոցների ընդունման համար առաջնահերթություններ են համարվում:

Հանձնաժողովը պետք է պարբերաբար փոփոխի աշխատանքային պլանը՝ Խորհրդատվական ֆորումի հետ խորհրդակցելուց հետո:

2. Այնուամենայնիվ, անցումային ժամանակաշրջանում, մինչ մշակվում է սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված առաջին աշխատանքային պլանը, համաձայն 15-րդ հոդվածում նշված չափորոշիչների և 18-րդ հոդվածում նշված Խորհրդատվական ֆորումի հետ խորհրդակցելուց հետո, Հանձնաժողովը պետք է, անհրաժեշտության դեպքում, ներկայացնի իր կանխատեսումները հետևյալի վերաբերյալ՝

ա) կիրարկումն ապահովող միջոցներ՝ սկսած այն արտադրանքներից, որոնք ԿՓԵԾ-ի կողմից ճանաչվել են ջերմոցային գազերի արտանետումների ծախսարդյունավետությունը նվազեցնելու բարձր հնարավորություն ունեցող արտադրանքներ, ինչպիսիք են ջեռուցման և ջրատաքացման սարքավորումները, էլեկտրական շարժիչով համակարգերը, կենցաղային սպառման և ծառայությունների ոլորտներում լուսային տեխնիկաները, կենցաղային տեխնիկան, կենցաղային սպառման և ծառայությունների ոլորտներում գրասենյակային սարքավորումները, սպառողական էլեկտրոնիկան և ՋՕՕ (ջեռուցման, օդափոխման և օդորակման) համակարգերը և

բ) կիրարկումն ապահովող առանձին միջոցներ, որոնք նվազեցնում են մի խումբ արտադրանքների հավելյալ կորուստները:

Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված ակտերը պետք է ընդունվեն՝ 19(3) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Հոդված 17

Ինքնակարգավորումը

Որպես կիրարկումն ապահովող միջոցների այլընտրանքային տարբերակ ներկայացված կամավոր համաձայնագրերը կամ ինքնակարգավորման այլ միջոցները պետք է գնահատվեն առնվազն VIII հավելվածի հիման վրա:

Հոդված 18

Խորհրդատվական ֆորումը

Հանձնաժողովը պետք է ապահովի, որ իր գործողություններն իրականացնելիս, ինքը, կիրարկումն ապահովող յուրաքանչյուր միջոցի մասով, պահպանում է անդամ պետությունների ներկայացուցիչների և տվյալ արտադրանքի կամ արտադրանքի խմբի հետ առնչվող հարցերով շահագրգիռ բոլոր կողմերի հավասարակշռված մասնակցությունը, ինչպիսիք են օրինակ՝ արդյունաբերությունը՝ ներառյալ ՓՄՁ-ները և նավարդյունաբերությունը, արհեստակցական միությունները, առևտրականները, մանրածախ վաճառողները, բնապահպանական խմբերը և սպառողների կազմակերպությունները: Այս կողմերը պետք է, մասնավորապես, նպաստեն կիրարկումն ապահովող միջոցները սահմանելուն և վերանայելուն, շուկայի վերահսկողության համար նախատեսված մեխանիզմների արդյունավետության ստուգմանը և կամավոր համաձայնագրերի և ինքնակարգավորման այլ միջոցների գնահատմանը: Կողմերը պետք է հանդիպեն Խորհրդատվական ֆորումին: Ֆորումի ընթացակարգային կանոնները պետք է սահմանի Հանձնաժողովը:

Հոդված 19

Կոմիտեի աշխատակարգը

1. Հանձնաժողովին աջակցում է Կոմիտեն:
2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:
1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով սահմանված ժամկետը սահմանվում է երեք ամիս:
3. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) հոդվածը և 7-րդ հոդվածը՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Հոդված 20

Պատժամիջոցները

Անդամ պետությունները սահմանում են սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային նորմերի խախտման դեպքում կիրառվող կանոնները և ձեռնարկում են բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են դրանց կիրառումն ապահովելու նպատակով: Նախատեսված պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ՝ հաշվի առնելով անհամապատասխանության ծավալն ու Համայնքում շուկայահանված անհամապատասխան արտադրանքների միավորների քանակությունը: Անդամ պետությունները Հանձնաժողովին տեղեկացնում են այս դրույթների մասին ամենաուշը մինչև 2010 թվականի նոյեմբերի 20-ը և առանց հապաղման տեղեկացնում են հետագայում դրանցում կատարված ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 21

Վերանայումը

Ոչ ուշ, քան 2012 թվականը, Հանձնաժողովը պետք է վերանայի սույն Հրահանգի և դրա կիրարկումն ապահովող միջոցների արդյունավետությունը, մասնավորապես, ներառյալ՝

ա) շրջակա միջավայրի էական այնպիսի պարամետրերի բացահայտման և լուսաբանման մեթոդաբանությունը, ինչպիսիք են՝ ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը՝ հաշվի առնելով արտադրանքի կյանքի ողջ պարբերաշրջանը,

բ) կիրարկումն ապահովող միջոցների շեմը,

գ) շուկայի վերահսկողության մեխանիզմները և

դ) նախատեսված ցանկացած համապատասխան ինքնակարգավորում:

Այս վերանայումից հետո և հաշվի առնելով, հատկապես, սույն Հրահանգի գործողության ընդլայնված ոլորտին առնչվող փորձը, Հանձնաժողովը պետք է, մասնավորապես, գնահատի էներգիայով չաշխատող արտադրանքների վերաբերյալ հրահանգի գործողության ոլորտն ընդլայնելու պատշաճությունը, որպեսզի էականորեն նվազեցնի նման արտադրանքների կյանքի ողջ պարբերաշրջանի ընթացքում շրջակա միջավայրի վրա դրանց ունեցած ազդեցությունները 18-րդ հոդվածում նշված Խորհրդատվական Ֆորումի հետ խորհրդակցելուց հետո և պետք է, անհրաժեշտության դեպքում, սույն Հրահանգում

փոփոխություններ կատարելու մասին առաջարկներ ներկայացնի Եվրոպական պառլամենտին և Խորհրդին:

Հոդված 22

Գաղտնիությունը

Արտադրողի կամ իր լիազոր ներկայացուցչի կողմից 11-րդ հոդվածում և I հավելվածի 2-րդ մասում նշված տեղեկատվության տրամադրման վերաբերյալ պահանջները պետք է լինեն համաչափ և պետք է հաշվի առնեն առևտրային տեսանկյունից կարևոր տեղեկությունների օրինական գաղտնիությունը:

Հոդված 23

Փոխատեղումը

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում 1-ից 9-րդ, 11-րդ, 14-րդ, 15-րդ և 20-րդ հոդվածներին, ինչպես նաև I-ից V, VII և VIII հավելվածներին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ օրենքներ, կանոնակարգեր և վարչական ակտեր մինչև 2010 թվականի նոյեմբերի 20-ը: Նրանք այնուհետև Հանձնաժողովին են ներկայացնում այդ դրույթների տեքստը:

Երբ անդամ պետություններն ընդունում են նշված միջոցները, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Դրանք պետք է նաև ներառեն հայտարարագիր այն մասին, որ սույն Հրահանգով ուժը կորցրած ճանաչված հրահանգի գործող օրենքներին, կանոնակարգերին և վարչական ակտերին կատարված հղումները համարվում են սույն Հրահանգին կատարվող հղումներ: Անդամ պետությունները սահմանում են, թե ինչպես պետք է կատարվեն այդ հղումները և թե ինչպես պետք է ձևակերպվի այդ հայտարարագիրը:

2. Անդամ պետությունները Հանձնաժողովին պետք է ներկայացնեն ազգային իրավունքի հիմնական դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

Հոդված 24

Ուժը կորցրած ճանաչելը

IX հավելվածի Ա մասում նշված հրահանգով փոփոխված 2005/32/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում՝ չհակասելով IX հավելվածի Բ մասով սահմանված՝ հրահանգները ներպետական իրավունքում փոխատեղելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին:

Ուժը կորցրած հրահանգներին կատարվող հղումները պետք է մեկնաբանվեն որպես սույն Հրահանգին կատարվող հղումներ և մեկնաբանվեն՝ X հավելվածով սահմանված համեմատական աղյուսակին համապատասխան:

Հոդված 25

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Հոդված 26

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Ստրասբուրգում, 2009 թվականի հոկտեմբերի 21-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահը

Ժ. Բուզեկ

Խորհրդի կողմից՝

Նախագահը

Կ. Մալստրյոմ

[1] ՊՏ C 100, 30.04.2009թ., էջ 120:

[2] Եվրոպական պառլամենտի 2009թ. ապրիլի 24-ի եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռևս չի հրապարակվել) և Խորհրդի 2009թ. սեպտեմբերի 24-ի որոշում:

[3] ՊՏ L 191, 22.07.2005թ., էջ 29:

[4] ՊՏ L 242, 10.09.2002թ., էջ 1:

[5] ՊՏ L 218, 13.08.2008թ., էջ 82:

[6] ՊՏ L 218, 13.08.2008թ., էջ 30:

[7] ՊՏ C 136, 04.06.1985թ., էջ 1:

[8] ՊՏ C 141, 19.05.2000թ., էջ 1:

[9] ՊՏ L 297, 13.10.1992թ., էջ 16:

[10] ՊՏ L 237, 21.09.2000թ., էջ 1:

[11] ՊՏ L 37, 13.02.2003թ., էջ 24:

[12] ՊՏ L 37, 13.02.2003թ., էջ 19:

[13] ՊՏ L 396, 30.12.2006թ., էջ 1:

[14] ՊՏ L 39, 13.02.2008թ., էջ 1:

[15] ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:

[16] ՊՏ L 167, 22.06.1992թ., էջ 17:

[17] ՊՏ L 236, 18.09.1996թ., էջ 36:

[18] ՊՏ L 279, 01.11.2000թ., էջ 33:

[19] ՊՏ C 321, 31.12.2003թ., էջ 1:

[20] ՊՏ L 114, 27.04.2006թ., էջ 9:

[21] ՊՏ L 377, 31.12.1991թ., էջ 20:

[22] ՊՏ L 204, 21.07.1998թ., էջ 37:

[23] ՊՏ L 114, 24.04.2001թ., էջ 1:

Էկոնախագծման ընդհանուր պահանջները սահմանելու մեթոդը

(նշված 15(6) հոդվածում)

Էկոնախագծման ընդհանուր պահանջների նպատակն է բարելավել արտադրանքի բնապահպանական առանձնահատկությունները՝ շեշտը դնելով դրա բնապահպանական կարևոր ասպեկտների վրա՝ չնախատեսելով սահմանային թույլատրելի արժեքներ: Սույն հավելվածում նշված մեթոդը պետք է կիրառվի այն ժամանակ, երբ ուսումնասիրության ենթակա արտադրանքների խմբերի համար սահմանային թույլատրելի արժեքներ են սահմանվում: Հանձնաժողովը պետք է, 19(1) հոդվածում նշված կոմիտեին ներկայացվելիք կիրարկումն ապահովող միջոցների նախագիծը կազմելիս, որոշի բնապահպանական էական ասպեկտները, որոնք պետք է նշվեն կիրարկումն ապահովող միջոցներում:

15-րդ հոդվածի համաձայն Էկոնախագծման ընդհանուր պահանջները սահմանող կիրարկումն ապահովող միջոցները նախագծելիս Հանձնաժողովը պետք է կիրարկումն ապահովող միջոցների շրջանակում ընդգրկված համապատասխան արտադրանքների մասով որոշի Էկոնախագծման համապատասխան պարամետրերը՝ 1-ի մասում թվարկված պարամետրերից, տեղեկատվության տրամադրման պահանջները՝ 2-րդ մասում թվարկված պահանջներից և արտադրողի համար նախատեսված պահանջները՝ 3-րդ մասում թվարկված պահանջներից:

Մաս 1. Արտադրանքների համար նախատեսված Էկոնախագծման պարամետրերը

1.1. Այնքանով, որքանով դրանք վերաբերում են արտադրանքի նախագծին, բնապահպանական էական ասպեկտները պետք է սահմանվեն արտադրանքի կյանքի պարբերաշրջանի հետևյալ փուլերի առնչությամբ՝

ա) հումքի ընտրություն և օգտագործում,

բ) արտադրություն,

գ) փաթեթավորում, փոխադրում և բաշխում,

դ) տեղադրում և պահպանում,

ե) օգտագործում և

զ) շահագործումից դուրս գալը՝ այսինքն՝ այն վիճակը, երբ արտադրանքը սպառել է իր առաջին օգտագործումը նախքան վերջնական հեռացումը:

1.2. Յուրաքանչյուր փուլի համար, անհրաժեշտության դեպքում, պետք է գնահատվեն բնապահպանական հետևյալ ասպեկտները՝

ա) նյութերի, էներգիայի և այլ ռեսուրսների՝ ինչպես օրինակ քաղցրահամ ջրի կանխատեսելի սպառում,

բ) ակնկալվող արտանետումները դեպի օդ, ջուր կամ հող,

գ) ակնկալվող աղտոտումը ֆիզիկական այնպիսի ազդեցությունների հետևանքով, ինչպիսիք են՝ աղմուկը, վիբրացիան, ճառագայթումը, էլեկտրամագնիսական դաշտը,

դ) թափոնների կանխատեսելի առաջացումը և

ե) նյութերի և (կամ) էներգիայի վերաօգտագործման, վերամշակման և վերականգնման հավանականությունները՝ հաշվի առնելով 2002/96/ԵՀ հրահանգը:

1.3. Մասնավորապես, հարկ եղած դեպքում պետք է օգտագործվեն հետևյալ պարամետրերը և, անհրաժեշտության դեպքում, ուղեկցվեն այլ պարամետրերով՝ գնահատելու համար 1.2. կետում նշված բնապահպանական ասպեկտների բարելավման ներուժը՝

ա) արտադրանքի քաշն ու ծավալը,

բ) վերամշակման գործունեության ընթացքում առաջացած նյութերի օգտագործումը,

գ) էներգիայի, ջրի և այլ ռեսուրսների սպառումը կյանքի պարբերաշրջանի ընթացքում,

դ) այնպիսի նյութերի օգտագործումը, որոնք առողջության և (կամ) շրջակա միջավայրի համար դասակարգվել են որպես վտանգավոր նյութեր՝ համաձայն «Վտանգավոր նյութերի դասակարգման, փաթեթավորման և պիտակավորման հետ կապված օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի համապատասխանեցման մասին» Խորհրդի 1967 թվականի հունիսի 27-ի 67/548/ԵՏՀ հրահանգի [1] և հաշվի առնելով շուկայահանման և կոնկրետ նյութերի վերաբերյալ օրենսդրությունը, ինչպես նաև «Կոնկրետ վտանգավոր նյութերի և պատրաստուկների շուկայահանման և օգտագործման վերաբերյալ անդամ պետությունների իրավական նորմերի, կանոնակարգերի և վարչական ակտերի ներդաշնակեցման մասին» Խորհրդի 1976 թվականի հուլիսի 27-ի 76/769/ԵՏՀ հրահանգը [2] կամ 2002/95/ԵՀ հրահանգը,

ե) պատշաճ օգտագործման և պահպանման համար անհրաժեշտ սպառվող նյութերի քանակը և բնույթը,

զ) վերաօգտագործման և վերամշակման դյուրինությունը, որն արտահայտված է հետևյալի միջոցով՝ օգտագործված նյութերի և բաղադրիչների թիվը, ստանդարտ բաղադրիչների օգտագործումը, ապամոնտաժման համար անհրաժեշտ ժամանակը, ապամոնտաժման համար անհրաժեշտ գործիքների բարդությունը, վերաօգտագործման և վերամշակման համար հարմար բաղադրիչների և նյութերի նույնականացման համար անհրաժեշտ բաղադրիչի և նյութի ծածկագրման ստանդարտների օգտագործումը (ներառյալ ՍՄԿ ստանդարտների համաձայն պլաստմասսե մասերի պատրաստումը), դյուրությամբ վերամշակվող նյութերի օգտագործումը, արժեքավոր և այլ վերականգնվող բաղադրիչների և նյութերի դյուրամատչելիությունը. Վտանգավոր նյութեր պարունակող բաղադրիչների և նյութերի դյուրամատչելիությունը,

է) միավորումը և օգտագործվող բաղադրիչները,

ը) բաղադրիչների և ընդհանուր սարքավորումների վերաօգտագործման և վերամշակման համար վնասակար տեխնիկական լուծումներից խուսափելը,

թ) նախատեսված ժամկետի երկարաձգում, որն արտահայտված է հետևյալների միջոցով՝ երաշխավորված նվազագույն ժամկետ, պահեստային մասերի, մոդուլային սկզբունքի, մոդեռնացման հնարավորության և վերականգնման ունակության համար անհրաժեշտ նվազագույն ժամկետ,

ժ) առաջացած թափոնների քանակն ու առաջացած վտանգավոր թափոնների քանակը,

ժա) արտանետումներ դեպի օդ (ջերմոցային գազեր, թթվեցուցիչներ, ցնդող օրգանական միացություններ, օզոնային շերտը քայքայող նյութեր, կայուն օրգանական աղտոտիչներ, ծանր մետաղներ, պինդ մասնիկներ և օդ բարձրացած պինդ մարմիններ)՝ չհակասելով «Ոչ տրանսպորտային շարժական մեքենաների վրա տեղադրվելիք ներքին այրման շարժիչներից գազային և աերոզոլային աղտոտիչների արտանետումների դեմ ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ անդամ պետությունների օրենքների համապատասխանեցման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1997 թվականի դեկտեմբերի 16-ի 97/68/ԵՀ հրահանգին [3],

ժբ) արտանետումներ դեպի ջուր (ծանր մետաղներ, թթվածնային հավասարակշռության վրա բացասական ազդեցություն ունեցող նյութեր, կայուն օրգանական աղտոտիչներ) և

ժգ) դեպի հող արտանետումներ (մասնավորապես արտադրանքի օգտագործման փուլում վտանգավոր նյութերի արտահոսքն ու թափվելը և թափոնների հեռացման ժամանակ լվացահանման ներուժը):

Մաս 2. Տեղեկատվության տրամադրման վերաբերյալ պահանջները

Կիրարկումն ապահովող միջոցները կարող են արտադրողի կողմից տրամադրվող տեղեկատվություն պահանջել, որը կարող է ազդել արտադրողից բացի այլ շահագրգիռ կողմերի կողմից արտադրանքի տնօրինման, օգտագործման կամ վերամշակման ձևի վրա: Այս տեղեկությունները, անհրաժեշտության դեպքում, կարող են ներառել՝

ա) տեղեկություններ արտադրական գործընթացի հետ կապ ունեցող նախագծողի կողմից,

բ) տեղեկություններ սպառողների համար արտադրանքի բնապահպանական էական առանձնահատկությունների և արդյունավետության մասին, որոնք ուղեկցում են արտադրանքին, երբ այն շուկայահանվում է, որպեսզի սպառողները արտադրանքի ասպեկտները համեմատելու հնարավորություն ունենան,

գ) տեղեկություններ սպառողների համար այն մասին, թե ինչպես տեղադրել, օգտագործել և պահպանել արտադրանքը, որպեսզի հնարավոր լինի նվազագույնին հասցնել շրջակա միջավայրի վրա դրա ազդեցությունը և ապահովել կյանքի օպտիմալ տևողությունը, ինչպես նաև տեղեկություններ այն մասին, թե ինչպես վերադարձնել արտադրանքը շահագործումից դուրս գալուց հետո և, անհրաժեշտության դեպքում, տեղեկություններ պահեստային մասերի հասանելիության ժամկետի և արդիականացվող արտադրանքների հնարավորությունների մասին և

դ) տեղեկություններ մշակման կայանների մասին, որոնք զբաղվում են շահագործումից դուրս գալուց հետո արտադրանքի ապամոնտաժմամբ, վերամշակմամբ կամ հեռացմամբ:

Տեղեկատվությունը պետք է տրվի անմիջապես արտադրանքի վրա՝ որևէ հարմար տեղում:

Այս տեղեկությունները պետք է հաշվի առնեն Համայնքի օրենսդրությամբ նախատեսված պարտավորությունները՝ ինչպես օրինակ՝ 2002/96/ԵՀ հրահանգով:

Մաս 3. Արտադրողի համար նախատեսված պահանջներ

1. Եթե կիրարկումն ապահովող միջոցներում նշված բնապահպանական ասպեկտները համարվում են այնպիսին, որ դրանց վրա կարող է ազդել էապես ազդել արտադրանքի նախագիծը, ապա արտադրանքների արտադրողները պետք է արտադրանքի շրջանառության ընթացքում դրա մոդելի գնահատում իրականացնեն, որը հիմնված կլինի նորմալ պայմանների և օգտագործման նպատակների մասին ունեցած իրատեսական ենթադրությունների վրա: Բնապահպանական մյուս ասպեկտները կարող են ուսումնասիրվել կամավոր հիմունքներով:

Այս գնահատման հիման վրա արտադրողները պետք է սահմանեն արտադրանքի էկոլոգիական նկարագիրը: Այն պետք է հիմնված լինի արտադրանքի բնապահպանական համապատասխան առանձնահատկությունների և արտադրանքի կյանքի պարբերաշրջանի ընթացքում ծախսերի/եկամուտների վրա՝ արտահայտված ֆիզիկական մեծություններով, որոնք կարող են չափվել:

2. Արտադրողները պետք է օգտվեն այս գնահատումից՝ գնահատելու համար հենանշային արտադրանքների նախագծման այլընտրանքային տարբերակներն ու ձեռք բերված բնապահպանական արդյունավետությունը:

Հենանիշերը պետք է Հանձնաժողովի կողմից նշվեն կիրարկումն ապահովող միջոցներում՝ միջոցների պատրաստման ընթացքում կուտակված տեղեկությունների հիման վրա:

Նախագծման կոնկրետ լուծումների ընտրությունը պետք է բնապահպանական տարբեր ասպեկտների և բնապահպանական ասպեկտների ու համապատասխան այլ նկատառումների միջև խելամիտ հավասարակշռության հասնի, ինչպիսիք են՝ անվտանգությունն ու առողջությունը, ֆունկցիոնալության տեխնիկական պահանջները, որակը, արդյունավետությունը և տնտեսական ասպեկտները՝ ներառյալ արտադրական ծախսերն ու իրացվելիությունը՝ համապատասխանելով համապատասխան ամբողջ օրենսդրության հետ:

[1] ՊՏ 196, 16.08.1967թ., էջ 1:

[2] ՊՏ L 262, 27.09.1976թ., էջ 201:

[3] ՊՏ L 59, 27.02.1998թ., էջ 1:

Էկոնախագծման կոնկրետ պահանջները սահմանելու մեթոդը

(նշված 15(6) հոդվածում)

Էկոնախագծման կոնկրետ պահանջների նպատակն է բարելավել արտադրանքի ընտրված բնապահպանական ասպեկտները: Դրանք կարող են տվյալ ռեսուրսի նվազեցված սպառման համար պահանջների տեսք ստանալ՝ օրինակ արտադրանքի կյանքի պարբերաշրջանի տարբեր փուլերում ռեսուրսի օգտագործման սահմանափակում, անհրաժեշտության դեպքում (օրինակ օգտագործման փուլում ջրի սպառման կամ արտադրանքում ներառված կոնկրետ նյութի քանակության կամ վերամշակված նյութի նվազագույն քանակությունների համար նախատեսված պահանջների սահմանափակում):

15-րդ հոդվածի համաձայն Էկոնախագծման կոնկրետ պահանջները սահմանող կիրարկումն ապահովող միջոցները նախագծելիս Հանձնաժողովը պետք է կիրարկումն ապահովող միջոցների շրջանակում ընդգրկված համապատասխան արտադրանքների մասով որոշի Էկոնախագծման համապատասխան պարամետրերը՝ I հավելվածի 1-ի մասում թվարկված պարամետրերից և սահմանի այս պահանջների մակարդակները՝ համաձայն 19(2) հոդվածով նախատեսված կարգավորիչ ընթացակարգի, ինչպես օրինակ՝

1. Տեխնիկական, բնապահպանական և տնտեսական վերլուծությունը պետք է ընտրի շուկայում գտնվող արտադրանքը ներկայացնող մի շարք մոդելներ և սահմանի արտադրանքի բնապահպանական առանձնահատկությունների տեխնիկական տարբերակները՝ պահպանելով տարբերակների տնտեսական կենսունակության նշանակությունն ու խուսափելով առանձնահատկությունների որևէ էական կորստից կամ սպառողների համար անպիտանությունից:

Տեխնիկական, բնապահպանական և տնտեսական վերլուծությունը պետք է քննարկվող բնապահպանական ասպեկտների համար նաև որոշի լավագույնս աշխատող արտադրանքներն ու շուկայում հասանելի տեխնոլոգիաները:

Միջազգային շուկայում հասանելի արտադրանքների աշխատանքը և այլ երկրների օրենսդրության մեջ նշված հենանիշերը պետք է հաշվի առնվեն վերլուծության ընթացքում, ինչպես նաև պահանջները սահմանելիս:

Այս վերլուծության հիման վրա և հաշվի առնելով տնտեսական և տեխնիկական իրագործելիությունը, ինչպես նաև բարելավման ներուժը՝ կոնկրետ միջոցներ պետք է

ձեռնարկվեն՝ նպատակ ունենալով նվազագույնին հասցնելու արտադրանքի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

Հաշվի առնելով օգտագործվող էներգիայի սպառումը՝ էներգաարդյունավետության կամ սպառման մակարդակը սահմանվում է՝ նպատակ ունենալով, որ արտադրանքի ներկայացուցիչ մոդելները կյանքի պարբերաշրջանում վերջնական օգտագործողին հասանելի լինեն նվազագույն ծախսերով՝ հաշվի առնելով բնապահպանական այլ ասպեկտների հետևանքները: Կյանքի պարբերաշրջանի ընթացքում ծախսերի վերլուծության մեթոդը Եվրոպական կենտրոնական բանկի տրամադրած տվյալների հիման վրա օգտագործում է իրական զեղչային տոկոսադրույք և արտադրանքի իրական ժամկետներ. սա հիմնված է գնման գնի տատանումների արժեքի (որոնք առաջանում են արդյունաբերական ոլորտում կատարված ծախսերի տատանումներից) և գործառնական ծախսերի վրա, որոնք տեխնիկական բարելավման տարբերակների տարբեր մակարդակների արդյունք են՝ զեղչված տվյալ արտադրանքի ներկայացուցիչ մոդելների շահագործման ընթացքում: Գործառնական ծախսերը ծածկում են էներգիայի նախնական սպառման և այլ ռեսուրսների հավելյալ ծախսերը, ինչպես օրինակ՝ ջուրը կամ մաքրող նյութերը:

Զգայունության վերլուծությունը, որն ընդգրկում է համապատասխան գործոնները, ինչպիսիք են էներգիայի և այլ ռեսուրսների գինը, հումքի գինը կամ արտադրական ծախսերը, զեղչային տոկոսադրույքը և, անհրաժեշտության դեպքում, բնապահպանական արտաքին ծախսերը՝ ներառյալ ջերմոցային գազերի արտանետումների կանխման հետ կապված ծախսերը, պետք է իրականացվի՝ ստուգելու համար արդյոք կան էական փոփոխություններ և արդյոք ընդհանուր եզրակացությունները վստահելի են: Պահանջները հարմարեցվում են համապատասխանաբար:

Նման մեթոդաբանություն կարող է կիրառվել այլ ռեսուրսների նկատմամբ՝ ինչպես օրինակ ջրի:

2. Տեխնիկական, բնապահպանական և տնտեսական վերլուծությունների զարգացման համար կարող է օգտագործվել Համայնքի այլ գործողությունների շրջանակներում հասանելի տեղեկությունները:

Նույնը վերաբերում է Եվրոպական միության տնտեսական գործընկերների հետ առևտրում շրջանառվող արտադրանքների էկոնախագծման կոնկրետ պահանջները սահմանելու

համար աշխարհի այլ մասերում կիրառվող գոյություն ունեցող ծրագրերից ստացված տեղեկություններին:

3. Պահանջների ուժի մեջ մտնելու ամսաթիվը պետք է հաշվի առնի արտադրանքի վերանախագծման փուլը:

ՀԱՎԵԼՎԱԾ III

«ՇԵ» մականշում

(նշված 5(2) հոդվածում)

++++ Պատկերի պանակի նախընտրելի ձևաչափ++++

«ՇԵ» մականշումը պետք է ունենա առնվազն 5մմ բարձրություն: Եթե «ՇԵ» դրոշմակնիքը փոքրացվում կամ մեծացվում է, պետք է պահպանվեն վերոնշյալ նշագծված պատկերի վրա նշված համամասնությունները:

«ՇԵ» մականշումը պետք է փակցված լինի արտադրանքին: Եթե դա անհնար է, այն պետք է փակցվի փաթեթավորման կամ ուղեկցող փաստաթղթի վրա:

Նախագծման ներքին հսկողություն

(նշված 8(2) հոդվածում)

1. Սույն հավելվածը նկարագրում է այն ընթացակարգը, որով արտադրողը կամ իր լիազոր ներկայացուցիչը, որը կրում է 2-րդ կետով նախատեսված պարտավորությունները, ապահովում և հայտարարում է, որ արտադրանքը բավարարում է կիրարկումն ապահովող համապատասխան միջոցների համապատասխան պահանջները: Համապատասխանության մասին ԵԽ հայտարարագիրը կարող է ընդգրկել մեկ կամ ավելի արտադրանքներ և պետք է պահվի արտադրողի կողմից:

2. Կիրարկումն ապահովող միջոցների պահանջների հետ արտադրանքի համապատասխանության գնահատումը հնարավոր դարձնող տեխնիկական փաստաթղթերի պանակը պետք է կազմի արտադրողը:

Փաստաթղթերը, մասնավորապես, պետք է պարունակեն՝

ա) արտադրանքի ընդհանուր նկարագիրը և նպատակային օգտագործումը,

բ) արտադրողի իրականացրած շրջակա միջավայրի գնահատման համապատասխան ուսումնասիրությունների արդյունքները և (կամ) շրջակա միջավայրի գնահատման գրականությանը կամ կոնկրետ դեպքերի ուսումնասիրություններին ուղղված հղումներ, որոնք արտադրողն օգտագործում է արտադրանքի նախագծման լուծումները գնահատելիս, փաստաթղթավորելիս և որոշելիս,

գ) էկոլոգիական նկարագիրը, եթե այդ են պահանջում կիրարկումն ապահովող միջոցները,

դ) արտադրանքի նախագծման առանձնահատկությունների տարրերը, որոնք վերաբերում են արտադրանքի նախագծման բնապահպանական ասպեկտներին:

ե) 10-րդ հոդվածում նշված, ամբողջությամբ կամ մասամբ կիրառվող համապատասխան ստանդարտների ցանկը և կիրարկումն ապահովող միջոցների պահանջները բավարարելու համար ընդունված լուծումների նկարագրերը, եթե 10-րդ հոդվածում նշված ստանդարտները չեն կիրառվել կամ եթե այդ ստանդարտները չեն ընդգրկում կիրարկումն ապահովող միջոցների պահանջներն ամբողջությամբ,

զ) I հավելվածի 2-րդ մասում ներկայացված պահանջների համաձայն արտադրանքի նախագծման բնապահպանական ասպեկտների վերաբերյալ տրամադրված տեղեկատվության պատճենը և

է) էկոնախագծման պահանջների մասով իրականացված չափումների արդյունքները՝ ներառյալ այս չափումների հետ համապատասխանության մանրամասները՝ համեմատած կիրարկման միջոցներն ապահովող միջոցներում նշված էկոնախագծման պահանջների հետ:

3. Արտադրողը պետք է ձեռնարկի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ վստահեցնելու համար, որ արտադրանքն արտադրվում է 2-րդ կետում նշված էկոնախագծման առանձնահատկություններին համապատասխան և դրա նկատմամբ կիրառվող միջոցների պահանջների համաձայն:

Համապատասխանության գնահատման համար սահմանված կառավարման համակարգ

(նշված 8(2) հոդվածում)

1. Սույն Հավելվածը նկարագրում է ընթացակարգը, որով արտադրողը, ով կատարում է 2-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունները, հավաստիացնում և հայտարարում է, որ արտադրանքը բավարարում է կիրարկման միջոցներն ապահովող միջոցների պահանջները: Համապատասխանության մասին ԵԽ հայտարարագիրը կարող է ընդգրկել մեկ կամ ավելի արտադրանքներ և պետք է պահվի արտադրողի կողմից:

2. Կառավարման համակարգը կարող է օգտագործվել արտադրանքի համապատասխանության գնահատման համար՝ պայմանով, որ արտադրողն իրականացնի 3-րդ կետով նախատեսված բնապահպանական տարրերը:

3. Կառավարման համակարգի բնապահպանական տարրերը

Սույն կետը սահմանում է կառավարման համակարգի տարրերն ու այն ընթացակարգը, որով արտադրողը կարող է ապացուցել, որ արտադրանքը համապատասխանում է կիրարկումն ապահովող կիրառելի միջոցների պահանջներին:

3.1. Արտադրանքի բնապահպանական առանձնահատկությունների քաղաքականություն

Արտադրողը պետք է կարողանա ապացուցել կիրարկումն ապահովող կիրառելի միջոցների պահանջների հետ համապատասխանությունը: Արտադրողը պետք է նաև ի վիճակի լինի արտադրանքի բնապահպանական առանձնահատկությունների նպատակներն ու ցուցիչները սահմանող և վերանայող շրջանակ տրամադրելու՝ նպատակ ունենալով բարելավելու արտադրանքի ընդհանուր բնապահպանական առանձնահատկությունները:

Արտադրանքի բնապահպանական առանձնահատկությունները բարելավելու և էկոլոգիական նկարագիրը ստեղծելու համար արտադրողի կողմից ընդունված բոլոր միջոցները պետք է, անհրաժեշտության դեպքում, կիրարկումն ապահովող միջոցների և նախագծման ու արտադրության միջոցով փաստաթղթավորվեն համակարգվա և կանոնավոր ձևով՝ գրավոր ընթացակարգերի և ցուցումների տեսքով:

Այս ընթացակարգերն ու ցուցումները պետք է, մասնավորապես, պարունակեն հետևյալների պատշաճ նկարագրությունը՝

ա) այն փաստաթղթերի ցանկը, որոնք պետք է պատրաստվեն՝ ապացուցելու համար արտադրանքի համապատասխանությունը, և որոնք պետք է հասանելի դարձվեն,

բ) արտադրանքի բնապահպանական առանձնահատկությունների նպատակներն ու ցուցիչները և կազմակերպչական կառուցվածքը, պատասխանատվությունները, կառավարման լիազորություններն ու ռեսուրսների բաշխումը՝ կապված դրանց իրականացման և պահպանման հետ,

գ) ստուգումներն ու փորձարկումները, որոնք իրականացնում է արտադրողը՝ ստուգելու համար արտադրանքի արդյունավետությունը բնապահպանական առանձնահատկությունների ցուցիչների համար,

դ) ընթացակարգերը, որոնք պետք են անհրաժեշտ փաստաթղթերը վերահսկելու և ապահովելու համար, որ այդ փաստաթղթերը թարմացված են,

ե) կառավարման համակարգի բնապահպանական տարրերի իրականացումն ու արդյունավետությունը ստուգելու մեթոդը:

3.2. Պլանավորումը

Արտադրողը պետք է սահմանի և պահպանի՝

ա) արտադրանքի էկոլոգիական նկարագիրը սահմանելու ընթացակարգերը,

բ) արտադրանքի բնապահպանական արդյունավետության նպատակներն ու ցուցիչները, որոնք ուշադրություն են դարձնում տեխնոլոգիական տարբերակներին՝ հաշվի առնելով տեխնիկական և տնտեսական պահանջները և

գ) այս նպատակներին հասնելու ծրագիր:

3.3. Իրականացումն ու փաստաթղթավորումը

3.3.1. Կառավարման համակարգին վերաբերող փաստաթղթավորումը պետք է, մասնավորապես, համապատասխանի հետևյալների հետ՝

ա) պարտականություններն ու լիազորությունները պետք է որոշվեն և փաստաթղթավորվեն, որպեսզի հնարավոր լինի ապահովել արտադրանքի բնապահպանական արդյունավետ շահագործումը և վերանայման ու բարելավման գործընթացների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելը,

բ) փաստաթղթերը պետք է կազմվեն՝ մատնանշելով նախագծման վերահսկումն ու նախագծման ստուգման տեխնիկաները և արտադրանքը նախագծելիս օգտագործվող գործընթացներն ու կանոնավոր միջոցները և

գ) արտադրողը պետք է կազմի և պահպանի այնպիսի տեղեկություններ, որոնք նկարագրում են կառավարման համակարգի բնապահպանական հիմնական տարրերը և անհրաժեշտ փաստաթղթերը վերահսկող ընթացակարգերը:

3.3.2. Արտադրանքին վերաբերող փաստաթղթերը, մասնավորապես, պետք է ներառեն՝

ա) արտադրանքի ընդհանուր նկարագիրը և նպատականին օգտագործումը,

բ) արտադրողի իրականացրած շրջակա միջավայրի գնահատման համապատասխան ուսումնասիրությունների արդյունքները և (կամ) շրջակա միջավայրի գնահատման գրականությանը կամ կոնկրետ դեպքերի ուսումնասիրություններին ուղղված հղումներ, որոնք արտադրողն օգտագործում է արտադրանքի նախագծման լուծումները գնահատելիս, փաստաթղթավորելիս և որոշելիս,

գ) էկոլոգիական նկարագիրը, եթե այդ են պահանջում կիրարկումն ապահովող միջոցները,

դ) էկոնախագծման պահանջների մասով իրականացված չափումների արդյունքները նկարագրող փաստաթղթերը՝ ներառյալ այս չափումների հետ համապատասխանության մանրամասները՝ համեմատած կիրարկման միջոցներն ապահովող միջոցներում նշված էկոնախագծման պահանջների հետ,

ե) արտադրողը պետք է սահմանի մասնագրեր, որոնք, մասնավորապես, մատնանշում են կիրառված ստանդարտները. եթե 10-րդ հոդվածում նշված ստանդարտները չեն կիրառվում կամ եթե այդ ստանդարտները չեն ընդգրկում կիրարկումն ապահովող միջոցների պահանջներն ամբողջությամբ, համապատասխանությունն ապացուցելու համար օգտագործված միջոցները և

զ) I հավելվածի 2-րդ մասում ներկայացված պահանջների համաձայն արտադրանքի նախագծման բնապահպանական ասպեկտների վերաբերյալ տրամադրված տեղեկատվության պատճենը և

3.4. Ստուգման և ուղղիչ գործողությունները

3.4.1. Արտադրողը պետք է՝

ա) ձեռնարկի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որ արտադրանքն արտադրվում է համաձայն իր նախագծային առանձնահատկությունների և դրա նկատմամբ կիրառվող կիրարկումն ապահովող միջոցների պահանջների,

բ) սահմանի և պահպանի ընթացակարգեր՝ ուսումնասիրելու և արձագանքելու համար անհամապատասխանությանը և փոփոխություններ կատարի ուղղիչ գործողությունների արդյունքում փաստաթղթագրված ընթացակարգերում և

գ) առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ իրականացնի կառավարման համակարգի ամբողջական ներքին աուդիտ՝ բնապահպանական տարրերի մասով:

Համապատասխանության վերաբերյալ ԵԽ հայտարարագիր

(նշված 5(3) հոդվածում)

Համապատասխանության վերաբերյալ ԵԽ հայտարարագիրը պետք է ընդգրկի հետևյալ տարրերը՝

1. արտադրողի կամ իր լիազոր ներկայացուցչի անունը և հասցեն,
2. հստակ նույնականացման պահանջները բավարարող մոդելի նկարագրությունը,
3. անհրաժեշտության դեպքում կիրառված ներդաշնակեցված ստանդարտների հղումները,
4. անհրաժեշտության դեպքում գործածված այլ տեխնիկական ստանդարտներն ու մասնագրերը,
5. անհրաժեշտության դեպքում հղում կիրառվող «CE» մակնշման փակցնումն ապահովող Համայնքի այլ օրենսդրությանը,
6. արտադրողին կամ իր լիազոր ներկայացուցչին ինչ-որ բան պարտադրելու իրավասություն ունեցող անձի ինքնությունն ու ստորագրությունը:

Կիրարկումն ապահովող միջոցների բովանդակությունը

(նշված 15(8) հոդվածում)

Կիրարկումն ապահովող միջոցները պետք է, մասնավորապես, սահմանեն՝

1. խնդրո առարկա արտադրանք(ներ)ի տեսակ(ներ)ի հստակ սահմանումը,
2. խնդրո առարկա արտադրանք(ներ)ի էկոնախագծման պահանջ(ներ)ը, կիրարկման ամսաթիվը (ամսաթվերը), հերթական կամ անցումային միջոցները կամ ժամանակաշրջանները՝
 - ա) էկոնախագծման ընդհանուր պահանջ(ներ)ի դեպքում I հավելվածի 1.1 և 1.2 կետերում նշվածներից ընտրված համապատասխան փուլերն ու ասպեկտները, որոնք ուղեկցվում են I հավելվածի 1.3. կետում հիշատակված պարամետրերից ընտրված պարամետրերի օրինակներով՝ որպես ուղեցույց որոշված բնապահպանական ասպեկտների վերաբերյալ բարելավումները գնահատելիս,
 - բ) էկոնախագծման կոնկրետ պահանջ(ներ)ի դեպքում դրա (դրանց) մակարդակ(ներ)ը,
3. I հավելվածի 1–ին մասում նշված էկոնախագծման պարամետրերը, որոնց համար էկոնախագծման պահանջներ անհրաժեշտ չեն,
4. արտադրանքների կայանների համար պահանջները, երբ այն ուղիղ կարևորություն է ներկայացնում արտադրանքի բնապահպանական առանձնահատկությունների համար,
5. օգտագործվող չափումների ստանդարտները և (կամ) չափումների մեթոդները. անհրաժեշտության դեպքում, պետք է օգտագործվեն ներդաշնակեցված այն ստանդարտները, որոնց համարները հրապարակվել են Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում,
6. 93/465/ԵՏՀ հրահանգի համաձայն համապատասխանության գնահատման մանրամասները՝
 - ա) հատուկ ընթացակարգի ընտրությանը հանգեցնող գործոններ, եթե կիրառվող մոդուլ(ներ)ը տարբերվում է (են) Ա Մոդուլից,
 - բ) երրորդ կողմերի հավանության և (կամ) վավերացման չափորոշիչները, եթե այդպես է հարմար,

Եթե միևնույն արտադրանքի համար «CE» այլ պահանջներով տարբեր մոդուլներ են նախատեսվում, ապա գերակշռում է կիրարկումն ապահովող միջոցով նախատեսված մոդուլը,

7. մասնավորապես կիրարկումն ապահովող միջոցների հետ արտադրանքի համապատասխանությունը ստուգելը դյուրացնելու համար անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերի տարրերի մասին արտադրողների կողմից տրամադրվող տեղեկությունների վերաբերյալ պահանջները,

8. անցումային ժամանակահատվածի տևողությունը, որի ընթացքում անդամ պետությունները պետք է թույլ տան այն արտադրանքների շուկայահանումը և (կամ) գործածության մեջ դնելը, որոնք համապատասխանում են իրենց տարածքում գործող կանոնակարգերին կիրարկումն ապահովող միջոցների ընդունման օրը,

9. կիրարկումն ապահովող միջոցների գնահատման և հնարավոր վերանայման ամսաթիվը՝ հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացի արագությունը:

Ինքնակարգավորումը

(17-րդ հոդվածում նշված)

Բացի հիմնական իրավական պահանջից, որին ինքնակարգավորման նախաձեռնությունները պետք է համապատասխանեն, Պայմանագրի բոլոր դրույթներից (մասնավորապես ներքին շուկայի և մրցակցության վերաբերյալ կանոնները), ինչպես նաև Համայնքի միջազգային պայմանավորվածություններից՝ ներառյալ բազմակողմ առևտրի համար նախատեսված կանոնները, ինդիկատիվ չափորոշիչների հետևյալ ոչ սպառիչ ցանկը կարող օգտագործվել՝ գնահատելու համար ինքնակարգավորման նախաձեռնությունների թույլատրելիությունը՝ որպես սույն Հրահանգի համատեքստում կիրարկումն ապահովող միջոցների այլընտրանքային տարբերակ՝

1. Բաց մասնակցությունը

Ինքնակարգավորման նախաձեռնություններին մասնակցելը պետք է բաց լինի երրորդ երկրների օպերատորների համար և նախապատրաստական և կիրարկման փուլերում:

2. Ավելացված արժեքը

Ինքնակարգավորման նախաձեռնությունները պետք է խնդրո առարկա արտադրանքի ընդհանուր բարելավված բնապահպանական առանձնահատկությունների համար ավելացված արժեք տրամադրեն (ավելին, քան «բիզնես, ինչպես միշտ»):

3. Ներկայացուցչականությունը

Ինքնակարգավորման գործողությանը մասնակցող արդյունաբերությունը և դրանց ասոցիացիաները պետք է իրենցից համապատասխան սեկտորի մեծամասնություն ներկայացնեն՝ հնարավորինս քիչ բացառություններով: Անհրաժեշտ է հոգալ մրցակցության կանոնները հարգելու մասին:

4. Համարակալված և աստիճանական նպատակները

Բաժնետերերի կողմից որոշված նպատակները պետք է սահմանվեն պարզ և հստակ պայմաններով՝ սկսած հստակ սահմանված վերջնաժամկետից: Եթե ինքնակարգավորման նախաձեռնությունը երկար ժամանակահատված է ընդգրկում, պետք է միջանկյալ թիրախներ ընդգրկվեն: Պետք է հնարավոր լինի ճշգրիտ և վստահելի ինդիկատորներ օգտագործելու միջոցով մատչելի և վստահելի եղանակով դիտանցել նպատակների և

(միջանկյալ) թիրախների հետ համապատասխանությունը: Գիտահետազոտական տեղեկությունները և գիտական ու տեխնիկական տվյալները պետք է դյուացնեն այս ցուցիչների մշակումը:

5. Քաղաքացիական հասարակության ընդգրկումը

Թափանցիկություն ապահովելու նպատակ ունենալով՝ ինքնակարգավորման նախաձեռնությունները պետք է հրապարակվեն՝ ներառյալ համացանց և տեղեկատվության տարածման էլեկտրոնային այլ միջոցներ օգտագործելու միջոցով:

Նույնը պետք է կիրառվի դիտանցման միջանկյալ և վերջնական զեկույցների նկատմամբ: Բաժնետերերը՝ ներառյալ անդամ պետությունները, արդյունաբերական և բնապահպանական ՀԿ-ները և սպառողների ասոցիացիաները, պետք է հրավիրվեն ինքնակարգավորման նախաձեռնության շուրջ մեկնաբանություններ անելու:

6. Դիտանցումը և հաշվետվություններ ներկայացնելը

Ինքնակարգավորման նախաձեռնությունները պետք է լավ մշակված դիտանցման համակարգ պարունակեն՝ արդյունաբերության ոլորտի և անկախ ստուգողների համար հստակ որոշված պարտավորություններով: Հանձնաժողովի ծառայությունները, համագործակցելով ինքնակարգավորման նախաձեռնության կողմերի հետ, պետք է հրավիրեն դիտանցելու նպատակների իրականացումը:

Դիտանցման և հաշվետվության ներկայացման պլանը պետք է լինի մանրամասն ներկայացված, թափանցիկ և օբյեկտիվ: Հանձնաժողովը, որին աջակցում է 19(1) հոդվածում նշված կոմիտեն, պետք է ուսումնասիրի, արդյոք իրականացվել են կամավոր համաձայնագրերի և ինքնակարգավորման այլ միջոցների նպատակները:

7. Ինքնակարգավորման նախաձեռնությունն իրականացնելու ծախսարդյունավետությունը

Ինքնակարգավորման նախաձեռնությունն իրականացնելու ծախսերը, մասնավորապես, երբ խոսքը վերաբերում է դիտանցմանը, չպետք է հանգեցնի անհամաչափ վարչական բեռի՝ համեմատած դրա նպատակների և հասանելի այլ քաղաքականության գործիքների հետ:

8. Կայունությունը

Ինքնակարգավորման նախաձեռնությունները պետք է արձագանքեն սույն Հրահանգի քաղաքականության նպատակներին՝ ներառյալ միասնական մոտեցումը, և պետք է համապատասխանի կայուն զարգացման տնտեսական և սոցիալական ուղղություններին:

Սպառողների, առողջության, կյանքի որակի շահերի ու տնտեսական շահերի պաշտպանությունը պետք է միասնական լինի:

9. Դրդապատճառների համատեղելիությունը

Ինքնակարգավորման նախաձեռնությունները չեն կարող ճշգրիտ արդյունքներ ցույց տալ, եթե այլ գործոններն ու դրդապատճառները՝ շուկայական ճնշումը, հարկերը ևազգային մակարդակով օրենդությունը, հակասական ազդանշաններ են ուղարկում ինքնակարգավորման նախաձեռնության մասնակիցներին: Քաղաքականության հետևողականությունն այս առումով կարևոր է և պետք է հաշվի առնվի նախաձեռնության արդյունավետության գնահատման ժամանակ:

ՀԱՎԵԼՎԱԾ IX

ՄԱՍ Ա

Ուժը կորցրած ճանաչված հրահանգն իր հետագա փոփոխությունների ցանկով

(24-րդ հոդվածում նշված)

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2005/32/ԵՀ հրահանգ (ՊՏ L 191, 22.07.2005թ., էջ 29) | |

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008/28/ԵՀ հրահանգ (ՊՏ L 81, 20.03.2008թ., էջ 48) | միայն 1-ին հոդված |

ՄԱՍ Բ

Ազգային իրավունքում փոխատեղման ժամկետների ցանկը

(24-րդ հոդվածում նշված)

Հրահանգի փոխատեղման վերջնաժամկետը

2005/32/ԵՀ | 2007 թվականի օգոստոսի 11 |

2008/28/ԵՀ | — |

Համեմատական աղյուսակ

2005/32/ԵՀ հրահանգ |Սոյն հրահանգը|

1-ից 20-րդ հոդվածներ | 1-ից 20-րդ հոդվածներ |

21-րդ հոդված | — |

22-րդ հոդված | — |

23-րդ հոդված | 21-րդ հոդված |

24-րդ հոդված | 22-րդ հոդված |

25-րդ հոդված | — |

— | 23-րդ հոդված |

— | 24-րդ հոդված |

26-րդ հոդված | 25-րդ հոդված |

27-րդ հոդված | 26-րդ հոդված |

I-ին VIII հավելվածներ | I-ին VIII հավելվածներ |

— | Հավելված IX |

— | Հավելված X |